Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22
У-79

1525

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԿՈԿՈՅԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ
ՀԱՄԱՐ 39

2010

ՊԱՏԱՍԽԱՆԻՐ

ՄԽԻԹԱՐԱՑ ՔԱՀԱՆԱՅԻ ՍԿԵՒՌԱՑԻՈՅ

11467

12001

206
Մ-79

ՊԱՏԱՄԱՆԻՔ

ՄԽԻԹԱՐԱՅ ՔԱՀԱՆԱՅԻ

ՍԿԵՒՌԱՅԻՈՅ

ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ

ԱՌԱՔԵԼՈՅ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՆԵՐՍԷՍԻ ՎԵՀԱՓԱՌ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. Տ. ՅԱԿՈԲԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

2012

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1857

Ի ՅԻՇԱՏԱԿ ՅԱՒԵՐԻ

ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ ՄՕՐ ԻՒՐՈՅ ՄԱՀՏԵՍԻ
ԳՈՀԱՐԻՆԷ ԲԱՐԵՊԱՇՏՈՒՀԻ ՏԻԿՆՈՋ
ԱՄՈՒՍՆՈՅ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՊԱՂՏԱՍԱՐ
ԱՂԱՅԻ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՆՈՒԻՐԷ ՁՍՈՅՆ

ՄԵԾԱՐՈՅ ՄԱՀՏԵՍԻ ԳՈՒԳՈՐ ԱՂԱ
ՅՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՒՄ
Ի ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՎԱՅՐՍ ՓՈԿՉԻՆ
1857

ՉԼԿՈՒՑՈՒՄՆ

Զ ՀԱՏԸՆՏԻՐ պատասխանիս Համապատուութեան երկոտասանից Առաքելոց Մխիթարայ մեծիմաստ Քահանայի Սկեւռացւոյ, քաղցր է մեզ առանձինն 'ի լոյս ընծայեալ ընձեռել յայս նուագ բանասիրաց Ազգիս. իբր ոչ եթէ անուս և անտեղեակք զմերայինս վարկուցեալ պարունակելոցն 'ի սմա, քանզի չիք գլուխս յոյր վերայ աչք են՝ անգէտ այսմ. այլ զի յայտ իմն կամեցեալ առնել՝ եթէ որպէս զարդիս, նոյն և յոչ նուազ ժամանակաց անտի էին և են, որք զառածան յայսպիսի կանխակալ կարծիս. զՊետրոս յերկոտասանից անտի գերագունի իմն հասուցեալ պատուոյ և փառաց առաւել քան զՀանգիտաս

պատիւ աշակերտակիցն։ Զոր որ եթէ
մանր ինչ ոք միտ դիցէ առ 'ի վերահա-
սու լինել լեռվին՝ բնաւ իսկ բաւ է յու-
շի կապել զանսուտ բերանոյն զմատաղ
տիոցն զվճիռ, լինել իբր զմանուկ մի ան-
մեղ 'ի ժառանգութիւն խոստացելոցն
բարեաց յաւիտենից. Մարդ. ԺԸ. Ճ։
Ոչ զանխուլ ինչ է այս՝ որոց 'ի խելա-
պատակս միտք են. թէ և ոչ դոյզն զար-
մանաց առիթ, և 'ի մեր իսկ աւուրս Հր-
ռովմէականն կրօնի նախանձայոյզ ար-
քանեկաց առ այս կարի զակատուն.
որք առ 'ի կռիւ ոտին դատանել բարձ-
բայօն ընդվզանացն՝ զամենայն գուն դը-
նեն մոգել կախարդել զուշ՝ և զոմանց
իսկ զմերայնոց. թէպէտ և ոչ երբէք
վերջացեալք յարժանաւորն պատասխա-
նւոյ և փաստաբանութեանց ընդ ժա-
մանակս ժամանակս 'ի մեր կուսէ։ Որպէս
և յառաջակայս փայթ տարեալ և մեր
գոյիւ չափ՝ աւելորդ յեղյեղուկս բանից
թուիցիմք առաջի արկանել առ 'ի մեր-
կանալ զկէտ նպատակի մեր և զհեղի-

նակին. ոչ եթէ աղօտ ինչ արկանել ըղ-
ձքով առաքելոյն Պետրոսի, քա՛ւ 'ի մէնք.
այլ զի յայր վերայ որպէս 'ի ներկայումս
պահանջմունք և պատասխանիք են, ա-
մէք յառաջ իբրու վեց հարիւր մետա-
սան յաւուրս Հեթմոյ Հայոց Աբքայի, 'ի
Թուին Հայոց ՈՂԵ. նոյն պահանջմունք
էին և նոյն պատասխանիք, և ոչ աղա-
ւաղ և խառնիխուռն բանիւ՝ որպէս ո-
մանց կարծեցաւ գոլ. և զոր յայժմուս
զդայ Ազգ Հայոց՝ յայնմանէ և 'ի հին ա-
ւուրս Քրիստոսակրօն կղերս Հայաստա-
նեաց սուրբ Եկեղեցւոյ չէ՛ երբէք յետ-
նեալ, զանտեղի առաջարկս Հռովմէա-
կան բաժնին կարի քաջ ծանուցեալ.

Արդ ընդ բարեշնորհ հեղինակին՝
որ առ Ճշմարիտ հայրենասէր բարոյիցն
յօրինեալ զպատասխանիս նուիրեր Հայ-
կազն Աբքային, և մեք փութամք բա-
նասիրաց մերոց տալ զայս յընթերցումն՝
յարդարախոհութիւն մտաց, և այս իսկ
է կէտ նպատակի մեր։

Ա. Մ. Գ։

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

ՄԽԻԹԱՐ ՔԱՀԱՆԱՅԻ ՍԿԵՒՌԱՅԻՈՑ

Յաղագս համապատուութեան երկոտասանից Առաքելոց. ընդդէմ այնոցիկ՝ որք նուազ ասեն զՊետրոսեան ըստ իշխանութեան քան զՊետրոս. և զՊատրիարքն մեծ գոլ ասեն քան զկաթուղիկոս։

Ի հրամանէ Թադեւորին Հայոց Հեթմոյ և ի յորդորմանէ Եպիսկոպոսին Կասդաղենոյ Յակոբոյ։

Ա՛ՆՀԱՍԱՆԵԼԻ և անծանօթ ծոցոյ ծընունդ միայնոյ Հօր Միածինն որդի, որ է լոյս փառաց և նկարագիր էութեան նորա. մարդասիրապէս եկեալ ՝ի լրումն մարդարէական տառիցն, և զմեր նուաստութիւնս ընդ իւրոյ ծայրագունին միացուցեալ Աստուածութեան՝ և կատարեալ զբոլոր տնօրէնութիւնն մերձ ՝ի կամաւոր չարչարանսն պատուէր տայր առաքելոցն՝ վասն ելիցն որ կատարելոց էր Յերուսաղէմ, և յաղագս հանդերձելոցն նոցա։

Իսկ զծայրագոյնն և զառիթն իսկա-

պէս սիրոյն, զկատարեալ պարգևն ինքնադիմաբար ընձեռէր աշակերտացն՝ ասելով «Ո՛խաղաղութիւն զիմ տամ ձեզ՝ և զխաղաղութիւն զիմ թողում ձեզ»։ Լ՝ զանաղանեալ բացորոշէ 'ի ստորնայնոյս խաղաղութենէ, զի մի պատրեալ 'ի վայր քարշեցիմք 'ի հոմանուէնն. որ ոչ ունի ըստ իրացն հասարակութիւն, այլ ըստ անուանն միայն զնոյնութիւն հրամայէ. «Ոչ որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ». որպէս զի վերամբարձս առնիցէ զմիտս մեր՝ ձգելով առ ինքն 'ի բարձրն կոյս՝ յամենայն հեռևակ նըւաստութենէ։ Ի՛ստ որոց որք ընկալան և զհետ ընթացան առանց շեղելոյ և յետս դառնալոյ, անաշխարհիկս կոչեաց զնոսա՝ ասելով. «Դուք չէք յաշխարհէ աստի» և Պօղոս զնոյն ինքն զՔրիստոս ասէ թէ «Լ՝ խաղաղութիւն մեր, որ արար զերկոսեանն մի, և զմիջնորմն ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւնն 'ի մարմնի իւրում» այսինքն զբարձրայօնութիւն, որ անջրպետէ զընդունողս նորա յԱստուծոյ. վասն որոյ և այլուր յայտնի ցուցանէ՝ թէ «Ո՛խորհուրդս քակեմք, և զամենայն բարձրութիւն հպարտացեալ 'ի վերայ գիտութեանն Աստուծոյ,

և գերեմք զամենայն միտս 'ի հնազանդութիւն Քրիստոսի »։ Յեսանես թէ որպէս 'ի բաց մերժեն զամբարհաւաճութիւն 'ի տէրունականն հօտէ, զի մի՛ ոք ինքնասիրութեամբ շուք եղեալ կամացն՝ անձին իւրում որսասցէ փառս։ որպէս և այժմ յոլովս տեսանեմք հակառակութի յեկեղեցիս՝ սակս գահասիրութեան, կրտսեր վարկանելով զհամատառան ինքեանց զառաքելական աթոռան, յաղագս մարմնական ճոխութեամբ մայրաքաղաքացն, մանաւանդ զաթոռն Հայոց հայրապետութե։ Լուսիցուն ոչ սակաւ տիրէ իշխանականերս մասին՝ որ յիս։ եթէ որք զայսքան աւետարանութիւն խաղաղութեան ընկալեալք 'ի Քրիստոսէ, որ և Քրիստոսիւն խօսէր՝ թէ ընդէր լծակցութիւք լինիմք 'ի վերայ ճշմարտութեան, ընդվայր հարկանելով զահմանն՝ զոր Աստուած եդ՝ և ոչ մարդ։

Որպէս և պատմէ Աւետարանադիրն թէ կոչեաց առ ինքն զաշակերտան և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասանս, անուանեաց և եւ ասէ նոցա զնոյն իշխանութիւն, և ոչ եդ 'ի նոսա զանազանութիւն նախագահութեան ըստ մերոց

կարծեաց։ Իսկ յորժամ կրեաց 'ի նոսա այսպիսի կիրք որպէս մարդիկ ելով՝ և դեռևս ոչ ժամանեալք 'ի կատարելութիւն, ասէ ցնոսա Տէր՝ «Այլ դպրէս 'ի միջի ձերում, որպէս որ 'ի հեթանոսս իշխանքն. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ։» Զի նոցա զայս որպէս սահման յաւիտենական յանձն առեալ առանց երկբայութեան, և արդեամբ կատարեալ զպատուէրն, ամենայն ուրեք զկրտսերութիւն ողջունէին. որպէս Պետրոս առաքեալն ոչ վերջանայր կոչել զինքն երէց, ըստ խոնարհագոյն աստիճանին. և զորս ըստ նոցայն հաւասար իւր ասելով «Ի երիցունս այսուհետև աղաչեմ իբրև զերիցակիցս»։ Զի Պօղոս՝ որ բազումս վաստակեցաւ վասն առաւելութեան շնորհացն որ 'ի նմա, տրուսպ կոչէ զինքն համակարգիչն և գլուխ մեղաւորաց. և Մատթէոս յետ բարձրագոյն պատուոյն ընդունելոյ, ոչ անարժան վարկանի կոչել զինքն մաքսաւոր. և զնոյն մեղ աւանդեցին խրատելով՝ 'ի պատիւ զմիմեանսն ելանել. և զի՞ է երկայնել զիւրաքանչիւրսն զիջանելն։ Իսկ մեր զանց արարեալ զնոցին հետոյն՝ այլ իմն շաւիղ նորոգ հետաղաղ

տեցաք զարտուղի ընթանալով՝ անհաւասարութիւն 'ի հաւասարն մուծանելով և առաւելութիւն իշխանութեան, որ ոչ ունին գերազանցութիւն 'ի վերայ միմեանց. զոմն գլուխ դնելով՝ և զայլն իբրև անդամք և ստորանկեալք ընդ նորին տերութեամբ։ Որպէս ասէ եկեղեցին Հռովմայ՝ ընդ Պետրոսի լինել իշխանութիւն զմետասանսն, և ըստ նոցին սարասի զաթոռսն նոցա ընդ Հռովմայ. զոր ոչ կարեն ցուցանել յառաքելական մատեանցն. բայց եթէ զնախախնամաբար հրամայեալն Տեառն առ Պետրոս՝ առ 'ի բժշկութիւն մարդկօրէն յանցմանն, և յանձնապատան լինելոյն. զայն առեալ նիւթ առ 'ի լրումն իւրեանց ախտին՝ ախտակից համարելով և զսուրբն ինքեանց, և ընդ մարմնաւոր նախագահութեան կարծելով և զՀոգևորն և զԱստուածայինն՝ վարին տիրաբար 'ի վերայ մեր իբրու 'ի վերայ հնազանդելոց, և ընդ նոքօք հարկեցելոց. զոր ոչ 'ի լոյս ծանեայ, այլ ես ինձէն եղեալ ականատես առնն՝ և ականջալուր 'ի նմանէ բանիցն աւետարանականաց՝ որովք պարծինն մեծ գոլ. և զնոյն ինքն յեօթն աւանդեն գլուխս. սակս որոյ յոլովս տրամաբանեցաք.

զորս վերատին բուռն հարցուք հանդերձ Աստուծով, զորս հարցեալ քննեցաք, և լուծցուք մի ըստ միոջէ՝ ոչ մատցածին ինչ բանիւք և կամ ստայօդ ճարտասանութեամբ, այլ առաքելական և մարգարէական բանից վկայութեամբ. և զոր 'ի Քրիստոսէ ընկալան հրաման իշխանութեան։ Այլ զայս ոչ առ 'ի քակտումն պատուոյ սրբոյն Պետրոսի, քա՛ւ և մի լիցի. այլ առ 'ի հաստատութիւն անախտութեան նորա և գերազանցութեան աշխարհական կրից և նախանձու, և 'ի յայտնութիւն նոյնութեան երկատասանիցն իշխանութեան, որ պարգևեցաւ նոցա 'ի Տեառնէ ոչ 'ի վերայ միմեանց, այլ ըստ իւրաքանչիւր վիճակացն նոցա. և զայս ևս ոչ տիրելով, այլ լինել օրինակ հօտին ՅԱստուածայինն. և տալ զանձն ընդ ամենեցուն 'ի նեղուս, զի զամենեսին շահեսցին 'ի Քրիստոս։ Այլ նախ զժամանակն դիցուք վերոյգրեալ հանդիսին. զի մի անվաւեր և կարծեօք հանդիպելոցն թուեսցի. և ապա սկիզբն արասցուք հանդիպմանն մերոյ և տրամաբանութեանցն և ընդդիմադրութեան բանիցն նոցա։

Այլ եղև այս 'ի հայրապետութեանն

Հայոց Կոստանդեայ քառասներորդ երկրորդ ամին. և 'ի Թագաւորութեան Աբրամեան տոհմիս Հեթմոյ, որոյ յոյժ ախորժ թաւեցեալ առաջարկութիւն՝ յորժամ լուաւ, և հրամայեաց մեզ գրով արձանացուցանել։

Էին 'ի կողմանցն Իտալիոյ, 'ի հայրապետէն Հռովմայ ընկեր ըստ լատինացւոց քառքառոյ, որ թարգմանի 'ի լեզուս մեր դեսպան՝ բայց ներդործութեան նուիրակ, 'ի յերկիրն Գալլիացւոց 'ի քաղաքն Պոդոմեանց, որ այժմ կոչի Աքաիա. որ իշխէր ըստ հոգևորին ամենայն ծովեզերեացն Փիւնիկեցւոց մինչ 'ի մեծն Անտիոք, և ամենայն Պաղեստինի, որ ընդ Հռովմայեցւովք. և ըստ այնց հնազանդելոց առաքէ և առ Հայրապետն մեր 'ի քանից լուառնելով, որպէս զի ըստ նոցին և նա ընծայաբերը լիցի։ Իսկ Հայրապետն մեր սակաւ ինչ հոգ տարեալ այնմ, ապա հրովարտակաւ յուշառնէ 'ի ձեռն պատգամաւորաց՝ զորս առ այլս առաքեալ, զի 'ի յանցին և այնր փոյթ տարցին. իսկ նա և ոչ զնոսա ետես, որպէս ախորժէին՝ և զայրացեալ ցասմամբ դարձան։ Իսկ 'ի նոյն աւուրս Օշին եղբայր Թա-

դաւսրին մերոյ, Թադաւորական հրամանաւ գնաց հրեշտակութեամբ 'ի քաղաքն Աքախա՝ առ Լիկաթն և իշխանսն. և յետ պատահելոյն միմեանց՝ Լիկաթն յոյժ մեղադրել էր Կաթուղիկոսին մերոյ՝ որպէս տմարդոյ. զի եթէ ոչ՝ ասէ, վասն օտարսիրութեան և հիւրընկալութեան, սակայն վասն բնական հարկին զոր ունի 'ի Հռովմայ եկեղեցւոյն՝ պարտէր տեսանել զմեզ։ Յետ նա իբրև եկեալ առ Թագաւորն մեր պատմեալ զամենայն և առաւել ևս. և նոքա ըստ բնական բարուց աղգիս մերոյ, զայլս բարձրացուցանողաց և զինքեանս նուաստացուցանողաց՝ իրաւունս յոյժ վարկուցեալ զբստդտանսն, և իսկոյն յուշ առնեն Հայրապետին մերոյ. և ասեն՝ զի պատրաստեսցէ այր հանդերձ նամակաւ, կամ հրովարտակ հանդերձ ընծայիւք ընդ իւրոց հրեշտակացն զի երթիցէ. և նա անյապաղ յանձն առեալ զպատուէր՝ պատշաճ համարելով և նա զբանն. և իբր դատեցան, որք մերձակայքն էին՝ առաքել զոք. իրաւունս համարեցան զիմ նուաստութիւնս։ Յետ հրամայեաց Կաթուղիկոսն ինձ գնալ՝ և իմ թէպէտ և տկար գոլով և անպատ-

բատ 'ի բան, սակայն յանձն առի զընթացան. միայն զայս եւոուս պատուէր վասն գրելոյն, զի հնազանդութեան աւնուն բնաւ մի յիշեսցի. զի արք ճարտասանք են և որսորդք բանի, բայց ըզհակառակն էին գրել։

Այս զի ձմեռնային էր ժամանակն 'ի քաղում աւուրս ծանրանաւելք, հաւզիւ հասաք մերձ 'ի յելն Դեկտեմբերի ամսոյ 'ի քաղաքն Ասքային. ընդ մեզ ունելով հրամանաւ Կաթուղիկոսին մերոյ, զԵպիսկոպոսն Երուսաղէմի զմերաստեղ գտեալ 'ի Տրայիանուպոլիս։ Այս իբրև հանդերձեցան հրեշտակք Թագաւորին մերոյ յանդիման լինել Նիկաթին, և մեզ եւոուն պատուէր՝ զի և մեք պատրաստ լիցուք զկնի նոցա մնանել. և մնեալ նոցա և ասացեալ զպատուէրն, և մեք յոլով ժամս կացեալ առ դուրս մինչ տաքաժամեալ օրն. և զյամեցուցանելոյն զպատճառն յերկուց իմն կարծեցաք փաստիս, թէպէտ և ոչ իմացաք զստոյգն. կամ վասն բարձրայօնութեան նաղգոլով. և կամ խորհուրդ առնելով եթէ տեսցուք՝ եթէ ոչ. և կամ թէ յետ տեսանելոյն զինչ ասասցուք. զի անդ ունէր զդժնեայ ճարտասանն՝ որ կայն

յայս կոյս ծովու. յորոց մին էր Եպիս-
կոպոսն Կիպրոսի։

Հրամայեցին ապա և մեզ մտանել՝
դեռևս անդ գոլով և հրեշտակքն մեր.
և իբր մատուցաք զմատեանն և զընծայ-
սն՝ զոր 'ի Կաթուղիկոսէ, առեալ զմա-
տեանն ետ ցԵպիսկոպոսն մեր և ասէ
ընդ հեգն, դու ընթերցի՛ր զայդ. և հր-
ման առեալ սկսաւ զպատուէր Հայ-
րապետին մերոյ. և իբր փոքր մի ասա-
ցաք ոչ ետ թոյլ աւարտել. այլ ինքն
սկսաւ զայրացեալ, ասէ՝ առէ՛ք և զբե-
ռեալ իրդ. զի ես ոչ եթէ վասն մար-
մնաւոր շահից և ընչից խնդրելի զգաղն
Կաթուղիկոսին Հայոց, այլ վասն հոգե-
ւոր կարգի և օրինաց. զի մի՛ խրամա-
տեալ օցտեսցի ցանկն հայրենի. և շոր-
թեալ անդամքն 'ի գլխոյն՝ յապականուլի
մասնեսցին. որպէս թէ այլ առաքելական
Աթոռքն յեկեղեցւոյն Հռովմայն. զոր
Տէր հաստատեաց և ոչ մարդ. որպէս
ասէ առաքեալն Պօղոս՝ թէ « Հիմն այլ
ոք ոչ կարէ դնել՝ քան զեղեալն որ է
Յիսուս Քրիստոս »։ Եւ վասն այսորիկ
խնայելով 'ի ձեզ խնդրէաք, զի եկեալ
յոգեսցի 'ի գլուխն եկեղեցւոյ։

Եւ թէ յաղագս յոյժ ծերու թեանն՝

զի լուեալ իսկ է մեր, ոչ կարէր անձամբ գալ, որպէս ողորմելով ասեմ՝ ընդէր ոչ կանուխ առաքեաց զոք. և եթէ յաղագս հարկի բերմանցն և դղեկին էր յամելն, զի լուաւ 'ի մէնջ՝ զոր բերեր ԹերուԹի միոյ առն պակասուԹիւն. և այժմ զի՞նչ նուազեաց. և այլ յոլովս խօսեցաւ՝ զոր ոչ կարեմ ընդ գրով արկանել, և մեք լուա և եթ կայաք։ Լու 'ի հանդարտելն փոքր մի՝ ասէ ցիս դեսպան Թագաւորին մերոյ Թովմասն, արի աղաչեա՛ կրկին զի առցէ զընծայսդ. և իմ աղաչեալ յայժ, և ոչ առ. և ապա յարուցեալ նոյն ինքն 'ի դիմաց Թագաւորին մերոյ աղաչեաց, որպէս 'ի դիմաց որդւոյ իւրոյ՝ զոր ինքն կոչէր. լուեալ ասէ որդին քո՝ յայժ դըժուարանայ եԹէ ոչ առնուցուս. և նա զնոյն պատճառեալ՝ եԹէ ոչ վասն զգալի իրաց ագահուԹեան էր խնդիրն իմ, յորոս ծաղը եղեալ յայժ յեռոյ աղաչանօք խնդրեաց։

Լու ասէ ԼիկաԹն կերիցուք հայց. և մեր ոչ առեալ յանձն, ելեալ գնացաք յայժ արտմեալք ընդ արհամարհանս աւառաքելական ԱԹուսայն Հայոց. և ինձ այսպէս Թուի ԹԷ՝ եղև այս 'ի նախախնամուԹենէ Աստուծոյ, զի կամէր շարաս

մել զմեզ 'ի գիւտ խորհրդական և արժանաւոր երկուց բանիցս այսոցիկ՝ զոր հանդերձեալ եմք պատմել։ Այլ յետ այսորիկ իբրև ոչն ընդմիջեցաւ։ կոչէ և քաղցր ցուցանէ մեզ դէմս, և ասէ՝ 'ի բազում աւուրս կամ էր ինձ զուցատրել ընդ քեզ։ զի լուեալ է իմ վանքս, զի այր բանիբուն ես դու յաղագս քոյ, զի օգտէաք թերևս 'ի քէն։ բայց հարկ ոչնիցս ոչ ետ թոյլ մինչև ցայս, և այժմ խօսեսցուք։

Այլ իմ պատասխանի արարեալ առայն՝ ասեմ, եթէ ոչ եմ որպէս կարծեսդ։ և որ ասացն ընդ քեզ, թերևս ոչ էր տեղեակ յեանութեանս իմոյ։ այլ քոյդ յերկուց պատճառաց՝ զոր ասեսդ։ մի՝ ըստ իմաստասիրական բարուցդ անյաչաղկոտութեան։ և միւսն՝ ըստ աշակերտութեան փրկչին անարգամեծարութեան, զոր ինձ էր ասել։ զի յոյժ տխորժ էր ինձ գալն։ սակս զի աշակերտեալ օգտէի։ յորոց յոյժ էք հեռեալ Աստուածաշունչ գրոց։ բայց որոմ արտաբերեցիս բանս սրտիւ, զի տրտմութիւն ոչ սակաւ էր ինձ՝ զոր արարերն, զի ոչ ընկալար զընծայսն մեր, զի այն ոչ առաւելութիւն էր առ ձեզ, և ոչ նուա-

զուԹիւն՝ առ որ առաքեացն. և ոչ ըղ-
նամակն ընԹերցար՝ եԹէ վկայէի բա-
նիւք Թէ ոչ. և զպատուէրն ոչ լուար։

Լու ժպտեալ առ այն ասէ. այո՛ արաս-
ցուք՝ որպէս կամիս. միայն խօսեսցուք.
և ասեմ, եղեցի ըստ բանի քում. և ա-
սէ՝ այր իմաստուն ես՝ որպէս ասացի, և
զոր ինչ խնդրեմ, առնես պատասխանի։
Լու էր ժողով առ նա մեծ յաւուրս յայն-
միկ. քաղաքապետն որոյ անուն Զուփ-
րի այր խաղաղարար. և Մայէսոր[1] Դանի-
ղլան. և Քոռանիսոր[2] տանն հիւանդանո-
ցին, և ամենայն իշխանք ծովեզերեայց
բաց 'ի Բրէնյէն[3], և բովանդակ Ա-
գաՌիոն[4]. ոչ գիտեմք զպատճառ ժողո-
վոյն Թէ վասն մեր էր, և Թէ յայլ պե-
տաց։ Լու ասեմ, զնա՞ւրդ կարացից ընդ
աղգի միոյ ողջոյն առնել պատասխանի,
մանաւանդ եԹէ վասն եկեղեցւոյ է
խնդիրն. և մի՛ հայիր յայս՝ եԹէ զի ա-
ռաքեցայ այսր իբր զկատարեալ, զի բա-
զում անգամ լինի յարքունիս, զի վա-
տացն պատահէ բարեբախտուԹիւն. զի
եկեղեցին Հայոց յոյժ է փարԹամ իմաս-
տնովք և վարժեցելովք Աստուածա-

1 Տէր։
2 Հրամանատար։
3 Իշխան։
4 Փաստաբան։

շունչ գրոց և տեղեկօք՝ որոց վերջինն ես եմ։ Բայց որոց բաւական լինիմ, և զորոց ունիմ հրաման և վստահութիւն 'ի Հայրապետէն մերմէ, տաց ըստ կարողութեան իմոյ պատասխանի. և որոց ոչ՝ գրեցից և տարայց. և նա հարուստ ժողովեալ քննեալ հանէ 'ի փարթամութենէ գանձուց իւրոց. զոր 'ի հնոց և 'ի նորոց հանեալ, առաքեսցէ առ ձեզ պատասխանի. և հաճոյ թուեցաւ բանն յոյժ ամենեցուն։ Բայց ասեմ՝ միայն տացես ինձ տեղի բանի և պատասխանւոյ, զի ասէր յոլով՝ և սակաւ լսէր. և արդ որովհետև իշխանութի ընկալեալ հարցանել. ասացեր՝ եթէ հիմն այլ ոք ոչ կարէ դնել ասէ առաքեալն Պօղոս՝ քան զեդեալն որ է Յիսուս Քրիստոս. և այդ յիրաւի. և ես յաւելում զնոյն ինքն յաջորդ բանն՝ «Եթէ ոք շինեսցէ 'ի վերայ հիմանս այսորիկ հաստատեսցէ»։ Բայց արդ շինեսցուք մի խոտ յայրուումն հրոյ, այսինքն՝ արտաքոյ նոցին վարդապետութենն, այլ ոսկի և արծաթ փորձեալ և զտեալ հրով հոգւոյն ըստ նոցին բանիցն, զի մնասցէ. և որ շինէն՝ վարձս առցէ ըստ առաքինի ճարտարացն, և ասեն այսմ։

Այլ ասեմ, ուստի ունի եկեղեցին Հռովմայ զիշխանութիւնդ զայդ, զի ինքքն դատէ զայլ առաքելական աթոռան և ինքն յայլոց ոչ քննի. զի յաւէտ մեք ունիմք կար ըստ առաքելոցն օրինակի դատել զձեզ. և դուք ոչ կարէք քննել զմեզ. և լուեալ զբանս զայս՝ յոյժ խոժոռեցան. բայց ոչ արտաբերեցին վասն մեծահոգողութեան բարուցն. այլ հաբցանեն հանդարտ բարբառով. և ի ետ ձեզ զպատիւդ զայդ։ Այլ ասեմ, մի խիստ թուեսցի բանդ այդ առաջի ձեր, քանզի խոստացաք եթէ ոչ ելցուք արտաքս յԱստուածաշունչ գրոց. և ցուցանեմք ձեզ 'ի ծայրագոյն մատեանցն՝ զի դատեցին այլ Առաքեալքն զՊետրոս՝ խլեալ ձեռամբ և 'ի նմանէ, մինչ ինքն ել յԵրուսաղէմ արդարացուցանել զանձն յորժամ մկրտեաց զԿուռնելիոս, որպէս պատմէ Ղուկաս 'ի գործս առաքելոցն թէ "Լուան առաքեալքն և եղբարքն, որ էին 'ի կողմանս Հրէաստանի՝ զի և 'ի հեթանոսս ընկալան զբանն Աստուծոյ։ Բայց յորժամ ել Պետրոս յԵրուսաղէմ, խղճէին 'ի նմանէ՝ որ 'ի թլփատութենէ անտի հաւատացեալքն էին, թէ եմուտ առ արս անթլփատս՝ և եկեր

ընդ նոսա. և սկսաւ Պետրոս պատմել նոցա կարգաւ զտեսիլն, մինչև 'ի վախճան... և իբրև սկսայ խօսիլ, ասէ՝ Հոգին սուրբ եկն 'ի վերայ նոցա, և յիշեցի զբանն Տեառն զի ասէր՝ Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր, բայց դուք մկրտիցիք 'ի Հոգին սուրբ »։

Տեսանեմ՝ զի ոչ միայն ոչ գիտէին ըզնա իշխան՝ առնել զոր ինչ և կամէր, այլև իշխանաբար խղճեալ դատէին ըզնա։ Այլ Պետրոս որպէս ոչ գիտելով զինքն իշխող նոցա, ոչ առնէ իշխանաբար պատասխանի որպէս Տէրն՝ զի ասէր « Իշխանութիւն ունիմ յիմոմս տալ որպէս և կամիմ » այլ խոստովանի յԱստուծոյ զհրամանն գոլ, և ոչ իշխանութեամբ՝ ասէ « Իսկ արդ՝ եթէ զհաւասարակաց պարգևն ետ Աստուած և նոցա՝ որպէս և մեզ՝ 'ի հաւատալն 'ի Տէր Յիսուս Քրիստոս, իսկ արդ՝ զի՞նչ կարող էի արգելուլ զԱստուած. և իբրև լուան զայս և տպա լռեցին ». յայտ է՝ թէ 'ի սէզ քինութիւն։ Տեսանեմ թէ որպէս յայտ առնէ զի ոչ է գլուխ Պետրոս։ Այլ գիտեմ զի ասեն առ այս, եթէ ոչ զառաքեալսն ասէ խղճեալ՝ այլ զդեռևս հաւատացեալսն, և զայն արար Պետրոս

վան նոցա տկարութեան՝ շահելով զզնոսա, որպէս ասէ Պօղոս՝ թէ «Օ՛տկարացեալն 'ի հաւատս ընկալարուք»։ Եւ որս ասեմք՝ թէ ոչ գոյր առ նոսա տկար. զի ասէ թէ «Ի՛ր ամենեցուն սիրտ և անձն մի», և դարձեալ եթէ ոչ էին մեռասանքն, ռեմ պատասխանի առնէր Պետրոս թէ «Իբրև սկսայ խօսիլ, Հոգին սուրբ եկն 'ի վերայ նոցա, որպէս 'ի վերայ մեր 'ի սկզբանն»։ Ի սկզբանն 'ի վերնատանն ոչք էին, եթէ ոչ երկոտասանքն միայն, և կամ ռեմ պատմեաց, եթէ ոչ լսողացն 'ի տեառնէ և գիտողաց բանին թէ «Յիշեցի զբանն Տեառն՝ զոր ասէրն թէ Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր, բայց դուք մկրտիցիք 'ի Հոգին սուրբ»։ Տեսանէք թէ որպէս ստուգեցաւ դատումն Պետրոսի 'ի մեռասանիցն, և ոչ ուրեք երևի թէ Պետրոս այսպէս դատեալ է զմեռասանն։

Եւ դարձեալ ասեմ յաղագս սիրոյ, զորոյ ունին վստահութիւն յանձն առնուլ՝ աղաչեմ զձեզ ըստ առաքելոյն զթութեամբն Աստուծոյ, և խրատ տամ որպէս եղբայր յեղբօրէ զօրացեալ՝ ոչ դնել զլուծն զայն յեկեղեցի, զոր ոչ բարձին հարքն մեր, այսինքն՝

Գ. Հ. Ս. Ա. Ի. Ա. Ն. Ի. Ա. Ն. Ի. Ա. Ն

զծառայական հնազանդութիւնն՝ և ոչ մեք կարեմք բառնալ։ Իսկ յաղագս սիրոյն՝ զոր ունիմք հրաման յԱստուծոյ և 'ի սրբոց առաքելոցն՝ պատրաստ եմք որպէս ասաց Քրիստոս՝ թէ «Յայսմ ծանիցեն զձեզ՝ թէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս», և Պօղոս յատկացուցանէ առաւել հարկաւոր գոլ 'ի վերայ եկեղեցականն զարգուս՝ զսէրն, ասելով «Օրս եղ Աստուած յեկեղեցւոջն՝ այս են, նախ՝ զառաքեալն, երկրորդ՝ զմարգարէն, երրորդ՝ զվարդապետն», և որ 'ի կարգին են անդամք եկեղեցւոյ։ Եւ յորժամ թուէ զիւրաքանչիւրոց շնորհն՝ ասէ «Նախանձաւորս լերուք լաւին. բայց ես առաւել ճանապարհ ցուցանեմ ձեզ, զի թէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և թէ ունիցիմ մարգարէութիւն և զհաւատս մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ»։

Եւ Յովհաննէս ասէ 'ի կաթուղիկէն թէ «Այս է պատուիրանն Հօր, զի հաւատասցուք յանուն որդւոյն նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս, զի այս է պատուէր նորա»։ Արդ՝ այսմ բարձրագոյն պատուիրանաց որ

ՅԱստուծոյ՝ և աստուածայնոյն յամենայնի պատրաստ է եկեղեցին Հայոց. ոչ արդէն իսկ սկսմամբ, այլ 'ի վաղընջուց որպէս նախնական աւանդեալ բերէ ժառանգութիւն զսէրն. մանաւանդ առ Հռովմայեցիսդ, որպէս և վկայեն որք աստ կան 'ի ձերոցդ՝ որ ոչ են անտեղեակ մերոցն և առ այլ ազգս՝ թէպէտ և ոչ համեմատ ձեզ, սակայն անդորրացեալ են իւրաքանչիւր ազգաց առաջնորդքն ըստ կարգի իւրեանց և պաշտաման յաստուածապարգև թագաւորութի՛ մեր, ոչ ինչ ունելով հարկ ՅԱստուածասէր թագաւորէն մերմէ՝ յաղագս քահանայական կարգի և աւանդութեան եկեղեցւոյ՝ զոր խնդրեմք ՅԱստուծոյ անշարժ մնալ 'ի Հայս։

Ասէ Լիկաթն՝ ոչ եթէ խափան լինելով պատուիրանի սիրոյն խնդրեմք զհնազանդութիւն, այլ որպէս շաղկապ լինելով՝ որպէս յապացուցեն ունիք ուսանիլ որպէս բոլոր անդամք 'ի մարմնի ամբողջ են 'ի գլուխն յօդմամբ սիրով, այսպէս և ամենայն Եկեղեցիքն պարտին հնազանդ լինել եկեղեցւոյն Հռովմայ. որպէս գլխոյ՝ զի ամբողջ մնասցեն անդամքն։

Եւ պատասխանի եւս տա այս. թէ հնազանդութիւն ոչ կարեմք առնուլ յանձն՝ որպէս յԱստուծոյ պարգեւեալ մեզ ազատութիւն հաւատար ձեզ ըստ երկոտասանիցն՝ զի հնազանդութի ծառայական է և աշխարհական և ոչ առաքելական, որպէս սահմանեալ աւանդեցին մեզ առաքեալքն թէ որոց և ումպարտ է հնազանդ լինել. գրէ երանելին Պետրոս թէ «Հնազանդ լերուք մարմնեղէն տեղծուածոց՝ եթէ թագաւորի, իբրև առաւել ումեք» և Պօղոս թէ «Հնազանդ լերուք տերանց» և ոչ զերկոտասանան միմեանց իշխեցին գրել. գիտելով զի Աստուած բանն եբարձ ըստ ծառայական հնազանդուի յինքեանց ասելով «Դուք չէք ծառայք, զի ծառայն ոչ ինչ գիտէ զտեառնն, այլ դուք բարեկամք էք իմ և խորհրդակիցք»։ Արդ՝ զնոքդ կարիցեմք յանձն առնուլ զհնազանդութիւն վերստին ծառայ լինել հակառակ ազատութեանն՝ որ 'ի Քրիստոսէ տուաւ մեզ։ Եւ վասն այսորիկ լռեալ այն օր, իսկ վազիւն ասէ Լիկաթն՝ ոչ խնդրեմք 'ի ձէնջ հնազանդութիւն որպէս ծառայից առ տէր, այլ որպէս որդւոյ առ հայր, որպէս գրէ Պօղոս թէ

«Որդիք հնազանդ լերուք հօր»։

Պատասխանի ետու և ասեմ, թէ յայդմ մասին Քրիստոս արդելու զմեզ թէ «Հայր մի կոչէք ոչք ձեզ 'ի վերայ երկրի, զի մի է Հայրն ձեր՝ որ յերկինս է», և Պետրոս երկրաւոր է՝ և ոչ երկնաւոր. արդ զիա՞րդ կարեմք թողուլ զորդեգրութիւն Հօրն երկնաւորի, և լինել որդի Պետրոսի՝ անսալով խրատու ձեր՝ և զանց առնել զխրատովն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. զի յայսմ մասին և ինքն Պետրոս զդուշացուցանէ զմեզ թէ «Հնազանդիլ պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան»։ Դարձեալ զի հարս սովոր եմք կոչել վերատին ծնողն աւազանաւն. և առաքեալն Պետրոս ոչ է մկրտեալ զմետասանսն, և նոքօք ըղմեզ. զիա՞րդ կոչիցեմք զնա Հայր։ Իսկ եթէ ասիցեն. ընդէ՞ր բնաւ բառնայք զհնազանդութիւն յեկեղեցւոյ, ո՞չ յիշէք զասացեալսն 'ի Պօղոսէ առ Կորնթացիսն թէ «Դիտէք զտուընն Ստեփանեայ և Փորտունատեայ՝ որք զանձինս իւրեանց կարգեցին 'ի պաշտօն սրբոցն. աղաչեմ զի և դուք հնազանդ լինիջիք նոցա» և որ սոցին նման գտեալ 'ի գիրս։ Ասասցուք նոցա՝ թէ ոչ զատորնայ

նոցն հնազանդութիւն բառնամք 'ի վերնոցն, այլ զերկոտասանիցն միայն, որք զմի և զնոյն ունին իշխանութիւն և պատիւ։

Ասէ Լիկաթն հանդերձ ընկերօքն շարժեալք յոյժ, զնաբդ ոչ է գլուխ Պետրոս առաքելոյն։

Պատասխանի ետու և ասեմ, ոչ գիտեմ զզնարդն։

Նա ասէ. որպէս ոչ գիտես. զի յետ համբառնալոյն զնա եդ գլուխ Քրիստոս։

Նա ասեմ, բնաւ այդմ ոչ եմ տեղեակ. և այս յերկուց պատճառաց՝ կամ 'ի մոռացմանէ յետ ընթեռնլոյն որպէս մարդ ելով, և կամ թէ ոչ հասին առմեզ գրեալքն. այլ ինձ յոյժ է պարծանք՝ եթէ յայսմ աշակերտեցայց եկեղեցւոյն Հռովմայ, աղաչեմ ուսուցանել ինձ, բայց ոչ 'ի բանից արտաքոյ ջորիցս այսոցիկ գրոց. Աբետարանին և պրակացն՝ և թղթոցն Կաթուղիկէից, և Պօղոսի առաքելոյն, և այսոցիկ մեք հնազանդիցեմք որպէս Աստուծոյ հրամանացն։

Ասէ Լիկաթն որպէս օրինակաւ, յորժամ թագաւորն ձեր ելանէ յերկրէն ոչ կացուցանէ 'ի տեղն իւր գլխաւոր։

Յիս ասեմ, այո։

Յիս ասէ, հնազանդիք նմա առ հաստարակ։

Յիս ասեմ. ոչ վասն նախապատուութեան հնազանդիմք, այլ որքան տայ նըմա իշխանութիւն Թագաւորն։

Յիս ասէ. այսպէս ամենայն Պատրիարքք և Կաթուղիկոս և արծուէսք և վէսք պարտին հնազանդ լինել աթոռոյն Պետրոսի որպէս գլխաւորի, և զի յաճախ ըստ այսմ կարգի թուէր զԿաթուղիկոս. ընդ որ յայժ բերեալ իմ, զոր յետոյ պատմեսցուք զպատասխանիս։

Յիս ասեմ առ այն, եթէ ցուցանէք յառաքելական մատեանցն, եթէ յելանելն իւր Քրիստոս եդ զՊետրոս գլուխ երկոտասանիցն՝ ընդունիմք, որպէս եմք ծառայք նորա։ Այլ և մեք ոչ եմք անտեղեակ ելից Փրկչին. ըստ այնմ թէ "Յլանեմ ես առ Հայրն իմ". զի երկուեն ելք, մին զօրութեամբ՝ յորժամ հանդերձեալ էր կամաւոր չարչարանաց մահուն ելանել, ասէր "Յրթամ ես առ առաքիչն իմ. իսկ միւսիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա եկեալ ուսուսցէ ձեզ զամենայն և յիշեցուսցէ ձեզ՝ զոր ինչ ասացի ձեզ"։

Իսկ յերկրորդն և յիսկապէս համբաւ-նալն պատմէ Ղուկաս թէ «Յայնժամ եբաց զաչս նոցա և ասէ, դուք էք վկայք այսոցիկ որ եղև՝ զոր յառաջագոյն ասացի, և ահա՛ ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի ձեզ. և դուք նստարուք 'ի քաղաքիդ Երուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն 'ի բարձանց. եհան զնոսա մինչև 'ի Բեթանիա, և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա. և եղև յօրհնելն նորա զնոսա՝ մեկնեցաւ 'ի նոցանէ և վերանայր յերկինս. և նոքա երկրպագեալ դարձան յԵրուսաղէմ», և յայսոսիկ առաւել եցոյց զհամապատուութիւնն. զի ձեռնադրեաց զնոսա և օրհնեաց համակարգս, և յետ իւր 'ի Հոգին սուրբ արար զնոսա ապաստան, և ոչ 'ի Պետրոս. արդ՝ ո՞ւր է դընեալն զնա գլուխ երկոտասանիցն։

Դարձեալ ասեն. ապա ո՞չ է գլուխ Պետրոս առաքելոցն, և կարի յաճախ՝ սրպէս զի յուրատ եղեց՝ զի չարախոսեսցեն զինէն իբրև զհերետիկոսէ։

Այլ ասեմ, ոչ կարեմ ասել թէ է. և կամ թէ ոչ է. զի յերկուց կողմանց է վասնզն. զի սրպէս ասիցեմ թէ ոչ է՝ հակառակ եկեղեցւոյն Հաստատմայ. և զի-

սրդ կարիցեմ ասել թէ է. զի ոչ եմ ընթերցեալ 'ի նոր Կտակարանս։

Յս ասեն, մի գրեալ է՝ թէ դու ես վէմ, և զոր յաղագս վիմին՝ յիւրում տեղւոջն ասացուք։ Իսկ ընդդիմակայութեամբ ասեմ. այլ է վէմն անուն, և այլ է գլուխն. գլուխ խոստացայք, ցուցէք յատուկ և ես ընդունիմ։ Յս իբրև ոչ կարացին 'ի գրոց ցուցանել, բանիւ ջանացին որսալ։

Ասեն, դու վարդապետ գոլով սրպէս քարոզէիր։

Ասեմ՝ որպէս յատենի Տեառն հասեալ կամ 'ի պատասխանատուութիւն ընդ որոց խօսեցայց, վասն որոյ հարկ է զճշմարիտն ասել. ես 'ի բեմբասացութեան իմում որպէս գլխաւոր վերապատմէի զՊետրոս և զՊօղոս։

Ասէ Լիկաթն, ոչ է գլուխ Պօղոս. քանզի միոյ եկեղեցւոյ, ասէ՝ երկու գլուխ ոչ վայելէ։

Յս ասեմ, այդ յիրաւի՝ քանզի ճըշմարիտ գլուխ եկեղեցւոյ Քրիստոս է, որպէս ասէ առաքեալ առ Եփեսացիս՝ եթէ «Յարոյց զՔրիստոս, և զնա եդ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ, որ է մարմին նորա. լրումն՝ որ զա-

մենայն յամենայնի ընու ». և ոչ Պետրոսի ասէ մարմին զեկեղեցի և զնա լցուցանող։ Եւ յաղագս այսր յոլով եղև տարաբերութիւն, մինչ զի ձանձրանալ լսողացն, զի կրկնաբանէին եթէ դու զիա՞րդ ասէիր զՊետրոս գլուխ։

Եւ ասեմ կարճառօտ, որպէս զՅովհաննէս Եփեսոսի և զԹովմաս Հնդկաց, և զԲարթուղիմէոս Հայոց և զայլսն։

Եւ ասեն, այդպէ՞ս միայն՝ և ո՞չ ընդհանուր։

Եւ ասեմ, ընդհանուր գլուխ Քրիստոս է որպէս ասէ դարձեալ Պօղոս առ Նոսին, թէ «Այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ և ինքն է Փրկիչ մարմնոյ», և ոչ է արժան հրաժարել մեզ 'ի փրկութենէ գլուխսն, որ է Քրիստոս։

Եւ ասեն, Քրիստոս 'ի յերկինս է գլուխ, և Պետրոս 'ի յերկրի։

Եւ ասեմ, այդմ դարձեալ Պօղոս առնէ պատասխանի 'ի Կորնթացւոց թղթին՝ եթէ «Նովաւ հաստատեցաւ ամենայն որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի՝ որ երևին և որ ոչ, եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք և եթէ իշխանութիւնք, ամենայն ինչ

նովաւ՝ և 'ի նոյն հաստատեցաւ և նո-
վաւ եկաց բովանդակ. և նա է գլուխ
մարմնոյ եկեղեցւոյ, որ է սկիզբն անդ-
բանիկ 'ի մեռելոց՝ զի եղիցի ինքն յա-
մենայնի յառաջացեալ». տեսանեմ թէ
սրպէս ընդ միով պարփակեաց գլխով
զերկնայինս և զերկրաւորս եկեղեցի,
և եբարձ զայդպիսի կարծիք։

Լաւ արդ ասացեալ յաղագս տրամա-
բանութեան սկիզբն արասցուք բանի-
ցըն, զոր յաւետարանչացն բերեն ընդ-
դէմ մեր, որովք մեծ կարծեն գոլ զին-
քեանս. զոր խոստացաք ըստ մասին ան-
ցանել։

ԲԱՆ ԱՌԱՋԻՆ

Ասէ Լիկաթն. ընդ Պետրոս միայն
ասաց Տէրն, «Դու ես վէմ և 'ի վերայ
այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ»։

Պատասխանի ետուս և ասեմ, նախ վէ-
մըդ՝ զոր ասէք յորոյ վերայ յարդարի շի-
նուածն՝ ըստ օրինակի զդալն ձեռակեր-
տաց ոչ ցուցանի գլուխ, քան թէ յոտն
յաւէտ, որպէս նոյն ինքն Քրիստոս հրա-
մայէ, թէ «Որ ըստ զբանս իմ և պահէ,

նման է առն խմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիմի զի իջին անձրևք, հնչեցին հողմք և խաղացին գետք և բաղխեցին զտունն՝ և ոչ կործանեցաւ. քանզի 'ի վերայ վիմի հաստատեալ էր »։

Տեսանեմ՝ թէ որպիսի վկայիւ հաստատեցաւ թէ ոչ է գլուխ վէմն՝ այլ ստորին մասն։

Այլ դիտ։

Զի ոչ եթէ նորոգ եդ նմա զվէմն անուն որպէս մրցանակ դաւանութեան, այլ զառաջինն յուշ առնէ. զոր 'ի կոչմանէն անուանեաց. որպէս և գրէ Մատթէոս՝ թէ «Մինչդեռ անցանէր Յիսուս ընդ եզր Ծովուն Գալիլեացւոց, ետես երկուս եղբարս. զՍիմոն՝ զկոչեցեալն վէմ »։ և Յովհաննէս զնոյն վկայէ թէ «Բեր զքո մին յերկուց անտի եղբայր Սիմոնի վիմի » և արդ վէմդ անուն կանխագոյն է 'ի վերայ Պետրոսի որպէս ցուցաւ՝ և զի ոչ ասաց թէ, դու եղիցիս վէմ, այլ թէ զի դու ես վէմ, որպէս թէ դու ինքն վէմ ես։ Ապա յայտ է, թէ զմետասանան և զկոչեաց յայսմ վայրի վէմ. զի ոչ ասաց եթէ 'ի վերայ քո շինեցից զեկեղեցի իմ՝ այլ եթէ 'ի

վերայ այդը վիմի շինեցից. զաս ընթերան ցուցանելով, զի վեմք են և այլքն 'ի հիմունս եկեղեցւոյ. որպէս վկայէ Եսայիաս վասն այսր, որպէս 'ի դիմաց Աստուծոյ թէ «Ահաւասիկ պատրաստեալ եմ կարկեհան զքարինս քո, և զհիմունս քո շաֆիւղայ, և ածից շուրջ զքեզ պարիսպ յընտիր քարանց պատուականաց, և զորդիս քո խրատեալս յԱստուծոյ».

Տեսանե՞ս թէ որպէս ցուցանէ զերկոտասանսն զոր ընտրեաց Տէր. և որդիք խրատեալք ՚ի՛ք են, եթէ ոչ՝ որք խրատեցաք յԱստուածն բանէ. և Դաւիթ ասէ, «Հիմունք նորա 'ի լեառն սուրբ նորա»։ Լեառն ասէ զեկեղեցի ըստ այնմ թէ «Տէր ո՞վ կացցէ 'ի խորանի քում, կամ ո՞վ բնակեսցի 'ի լեառն սուրբ քո». և զի ոչ միայն երկոտասանքըն են հիմունք եկեղեցւոյ՝ այլ և մարգարէքն. զի նոքա վաստակեցին, և առաքեալքն 'ի վաստակս նոցա մտին՝ զի հասարակ վայելեսցեն ըստ տեառն։ Այլ Պօղոս որ Քրիստոսիւն խօսէր, կնքէ ըզբանս. զի ՃՀմարտէ ասելովն առ Եփեսացիս՝ «Այսպէս այսուհետև ոչ էք օտարք և պանդուխտք. այլ քաղաքակիցք սրբոյ և ընտանիք Աստուծոյ. շինեալք 'ի

վերայ հիման առաքելոյ և մարգարէից. որոյ գլուխ անկեանն է Յիսուս Քրիստոս, յորում ամենայն շինուածն յօդեալ և պատշաճեալ աճէ 'ի տաճար սուրբ տէրամբ»։ Ահա եղբարք յայտ եղև՝ թէ ոչինչ ունի Պետրոս առաւելութիւն վասն վէմն անուանելոյ, այլ հասարակ է ընդ առաքեալս և ընդ մարգարէս 'ի հիմունս եկեղեցւոյ. որոյ գլուխ Քրիստոս է, և ոչ նա։

Այլ պատասխանի։

Դարձեալ զդաւանութիւն ասէ վէմ Քրիստոս, զոր դաւանեաց զնա Պետրոս, թէ «Դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ» ըստ նախագուշակութեանն Դանիէլի, զի ասէ «Տեսանէի՝ և ահա վէմն առանց ձեռին հատաւ 'ի լեռնէն» և Պօղոս ասէ, թէ «Վէմն էր ինքն Քրիստոս». վասն այսորիկ ասէ Տէր. «Եթէ 'ի վերայ այդր վիմի, այսինքն՝ 'ի վերայ այդր դաւանութեան շինեցից զեկեղեցի իմ» և զի յառաջ քան զՊետրոս դաւանեալ էին մեռասանքն զՔրիստոս, յորժամ 'ի չորրորդում պահու գիշերին դայր առ նոսա 'ի վերայ ծովուն. և աշակերտքն առ ահին զաղաղակ բարձին,

և Յիսուս խօսեցաւ և ասէ ցնոսա, մի երկնչիք ես եմ. ասէ Պետրոս, Տէր եթէ դու ես, ասա ինձ գալ առ քեզ. և ասէ եկ. և ելի գնալն կամէր ընկղմիլ և ձեռն ետ նմա. և իբրև ել ի նաւն ընդ իւր ուներլով զՊետրոս և հանդարտեաց հողմն. մատեան որք ի նաւին էին՝ երկիրպագին նմա և ասեն, արդարև որդի Աստուծոյ ես դու. և Պետրոս ոչ էր ընդ նոսա». վասն այսորիկ ի հարցմանն Որդւոյ, շարժեաց զնա Հայր ի դաւանել՝ զի մի նուազ երևեսցի յայսմ մասին քան զմեռասանսն։ Ասէ Եւիկաթն, զՊետրոս Հայր շարժեաց ըստ ասացելումն։

Առ որ ասեմ, թէ և զամենեսեան շարժէ Հայր ըստ բանին Տեառն. թէ «Ոչ ոք գայ առ իս՝ եթէ ոչ Հայր իմ ձգեսցէ զնա», և Յովհաննէս թէ «Որ առաքեացն զիս, նա ասաց, թէ յոր վերայ տեսանիցես զՀոգին, նա է. և մեք տեսաք և վկայեմք՝ թէ սա է Որդին Աստուծոյ». և Հայր է որ ամենայն ուրեք յայտնէ զորդին իւր։

ԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ասէ Լիկաթն, ընդ Պետրոս միայն ասաց Քրիստոս, թէ «Տաց քեզ զփա-կանս արքայութեան երկնից. և զոր մի-անգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կա-պեալ յերկինս, և զոր արձակիցես յերկ-րի՝ եղիցի արձակեալ յերկինս»։

Պատասխանի ետու և ասեմ, եթէ խոստացաւ միայն յայսմ վայրի, և ոչ ետ զիշխանութիւնն Քրիստոս. քանզի ոչ ասաց թէ առ կամ ընկալ, այլ եթէ տաց քեզ։ Տեսանե՞ս եթէ որպէս առ յապա ցուցանէ զտալն։

Իսկ եթէ ետ անդէն՝ ասացէք եթէ զի՞նչ է տուեալն, որով պարծիք 'ի վե-րայ մեր, զի ասա զփականս միայն յիշէ՝ եթէ խոստացաւ և եթէ ետ. և ըզ-մեծագոյնն որ է բանալն՝ ոչ յաւելու. և զի՞նչ փառք էր Պետրոսի փականքն միայն առանց բանալոյ ուր և փարիսե-ցւոցն զնոյնն ասաց ունել Քրիստոս։

«Վա՛յ ձեզ՝ ասէ, փարիսեցւոց և դպրաց զի փակէք զարքայութիւն երկ-նից, դուք ոչ մտանէք՝ և որք մտանեն, արգելուք»։ Իսկ բանս այս միայն է՝ որ յատկանայ առ Պետրոսի, և այսու որով

մեծացուցանել կարծէիք, նուաստացուցիք։ Իսկ եթէ զկապելն և զարձակելն ասէք՝ որ է ճշմարիտ և բարձրագոյն իշխանութիւն, զայս ոչ միայն Պետրոսի՝ այլ և մեռասանիցն խոստացաւ. յորժամ պատուէր տայր նոցա՝ «Թէ մեղիցէ քեզ եղբայրն քո՝ երթ յանդիմանեա զնա միայն. և յանլուր լինելն և յերկրորդումն՝ ասա յեկեղեցւոջ. և թէ նոցա ևս ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զէթեթանոսն. ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս». ահա և յայսմ մասին հաստարակ երևեցան երկոտասանքն. և որպէս ոչ կամեցաւ Հայր զբկել Պետրոսի անդ 'ի դաւանութեանն, նոյնպէս ասաց Որդի զմեռասանսն 'ի խոստմանէն. և զի խոստումն այն որ էր միայն Պետրոսի. և այս՝ որ երկոտասանիցն հաստարակ, նոյն ինքն Պետրոս յայտնէ հարցանելովն զՔրիստոս՝ «Տէր քանիցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայրն իմ՝ թողից նմա»։ Տեսանէք զի դեռևս ոչ են առեալ զիշխանութիւն, վասն այսորիկ իբրև զանծանօթ սահմանի իշխանութեանն հարցանէ։

Ասէ Լիկաթն, եթէ այսոքիկ խոստմունք են, ապա ո՞ւր են տուրքն. միթէ ստէ՞ Քրիստոս։ Նա ասեմ, ոչ ստէ ճշմարտութիւնն, այլ յետ յարութեանն յորժամ առաքէր զնոսա ետ հասարակ զկատարեալ իշխանութիւնն Հոգւովն սրբով. «Յերեկոյի միաշաբաթուն յորժամ եմուտ Յիսուս դրօքն փակեալովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ. եկաց 'ի մէջ նոցա և ասէ. ողջոյն ընդ ձեզ. և կրկնեալ զողջոյնն՝ ասէ ցնոսա որպէս առաքեաց զիս Հայր՝ և ես առաքեմ զձեզ. և զայս իբրև ասաց փըչեաց 'ի նոսա և ասէ՝ առէք Հոգի սուրբ. եթէ զուրուք թողուցուք զմեղս, թողեալ լիցի, և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի»։

Տեսանէ՞ք՝ թէ որպէս զանազանին խոստմունքն 'ի պարգևացս. զի անդ ասէ՝ թէ զոր կապեսցես, և ասա թէ զորոց թողուցուք և ունիցիք։

Այլ պատասխանի։

Դարձեալ յորժամ հարցին աշակերտքն զՏէր յառակ սերմանացանին, թէ «Ընդէր առակօք խօսիս ընդ նոսա. ասէ ցնոսա, ձեզ տուեալ է գիտել ըզ

խորհուրդս արքայութեան երկնից ». և Դուկաս ասէ թէ « Ամբարձ զաչս իւր յաշակերտսն և ասէ . երանի՛ է աղքատացդ հոգւով, զի ձեր է արքայութիւն երկնից » ։ Արդ եթէ զանձառիցն և ընչեբքսադունից խորհրդոցն զիշխանութիւն ետ դիտել, որ իւր է և իւրոցն միայն՝ ըստ գրեցելումն թէ « Խորհուրդ իմ ինձ՝ և իմոցն », զիաւրդ զարտաքին և որ դրանն՝ յաչաղէր տալ մեռասանիցն ։ Այլ դարձեալ թէ զբովանդակ տէրութիւն արքայութեանն ետ երկոտասանիցն, զիաւրդ զփոքրագոյն իշխանութիւն դրանն ոչ հաւատայր 'ի նոսա . և եթէ իւրոց է՝ որպէս և ետ, զիաւրդ ոչ ունին իշխանութի՛ յիւրեանց տէրութեն ։ Ահա՛ ցուցաւ մեծագունիւն թէ ունին և զփոքրագոյնն ։ Այլ այժմ տեսցուք, թէ զի՞նչ է բանալի արքայութեանն երկնից, և կամ ո՞ւմ ետ . զի մի՛ և մեք վրիպեալ 'ի ստուգութենէ բանին, ըստ այլոց ազգաց ընդունայն լեցի և մերն պարծանք ։

Արդ՝ որպէս գտաք 'ի Քրիստոսէ աւանդեալ, առաջին բանալի է միրտութիւնն, որպէս ասէ Յիսուս առ Նիկոդիմոս « Եթէ ոք ոչ ծնցի վերատին 'ի

ջոյ և 'ի հոգւոյ, ոչ կարէ մոռանել յարքայութիւնն երկնից» որոյ և ետ իշխանութիւն։

Եւ երկրորդ՝ կատարումն կամացն Հօր, որպէս ասէ դարձեալ Տէր, «Եթէ ոչ ամենայն, որ ասէ ցիս տէր տէր՝ մըտցէ յարքայութիւնն երկնից, այլ որ առբասցէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է»։

Եւ եթէ զինչ են կամքն Հօր, նոյն ինքն Որդին ուսուցանէ և ասէ «Այ են կամք Հօր իմոյ եթէ կորիցէ մի ոք 'ի նուցանէ», ըստ օրինակի գտելոյ ոչխարին միոյ 'ի հարիւրիցն մոլորեցելոյն, և տայ իշխանութիւն նոցա։ Եթէ մեղիցէ ասէ եղբայրն քո, երթ յանդիման կացո զմեղս նորա դու միայն՝ եթէ լուիցէ քեզ գալով 'ի խոստովանութիւն ապաշխարութեանն, շահեցար զեղբայրն. լոյծ 'ի ժամանակի զապաշխարութեան կապանս, և ընդարձակեա նմա զեկեղեցի և զկենարարն խորհուրդ, որ է առհաւատչեայ արքայութեանն երկնից. իսկ եթէ յամառեալ հրաժարէ, յետ կրկնակի և երրորդի յանդիմանութեան՝ եղիցի քեզ իբրև զհեթանոս. կապեա զնա արտաքոյ եկեղեցական խորհրդոցն, որ և յերկինս զնոյն ունի կապանս ըստ

անսուտ բանին Տեառն։

Արդ՝ ընկալեալ երկոտասանիցն ըզ-
կատարեալ իշխանութիւնս զայսոսիկ 'ի
Քրիստոսէ և ոչ 'ի Պետրոսէ, և սփռեալք
յիւրաքանչիւր վիճակս հաստատեցին ա-
թոռս ինքեանց, անշարժ 'ի դրանց դը-
ժոխոց ըստ բանին Տեառն. և բաշխե-
ցին զիշխանութիւնս զայս աշակերտե-
լոցն ձրի, որպէս և ընկալանն ըստ բա-
նին Քրիստոսի։ Այս այսմանի է յայս-
մանէ՝ որ այժմս կոտարի յեկեղեցի խոր-
հուրդ մկրտութեան, և խոստովանու-
թեամբ և ապաշխարութեամբ մաքրու-
թիւն 'ի Քրիստոսէ ազբիւրացեալ, ոչ
'ի ձեռն Պետրոսի 'ի մեռասանան՝ և ա-
պա նոքօք 'ի մեզ, այլ 'ի Քրիստոսէ հա-
սարակ յերկոտասանան, և 'ի ձեռն նո-
ցա յիւրաքանչիւրոցն վիճակս. վասն ո-
րոյ ոչ կարօտանամք եկեղեցւոյն Հռով-
մայ, զի ունիմք զիշխողն մեր 'ի Տեառ-
նէ առաքեալ հաւատար ձեզ. արդ մի՞ր
են պարծանքն ձեր որ ոչ է 'ի կամայն
Պետրոսի։

ԲԱՆ ԵՐՐՈՐԴ

Ասէ Լիկաթն՝ ոչ սասց տէրն, «Սիմոն դու երբեմն դարձցիս՝ և հաստատեսցես զեղբարս քո» և զինչ և ես գերագոյն իշխանութիւն քան զայս։

Պատասխանի, արդ հաստատելն զոք չէ՝ քան թէ յետ գլորման իրիք. և նախ հարցանեմք զձեզ՝ եթէ ո՞ւր գլորեցան մեռասանքն յետ ընդունելոյն զՀոգին սուրբ, զի հաստատեաց զնոսա Պետրոս. ցուցէք յառաքելական մատեանցն և հաւանիմք ձեզ. և այժմ որք 'ի նոցին սակի եմք այլ հարկեցուցանէք ըզմեզ անզգամիլ բայց ոչ եղէց անզգամ՝ քանզի զարդարն խօսիմ. գիտեմք ըզ Պետրոս միայն գայթակղեալ յետ յարութեան Տեառն, որպէս ասէ Պօղոս առ Գաղատացիսն, եթէ «Ընդ հեթանոսս ուտէր անխտիր. իսկ իբրև եկին ոմանք առ 'ի Յակոբայ՝ երկուցեալ զանէր մինչև կեղծաւորեցան ընդ նմա և այլք, և Բառնաբաս անգամ. և իբրև տեսի ասէ՝ թէ ոչ ուղիղ գնան 'ի ճշմարտութիւն աւետարանին, ասեմ ցկեփաս առաջի ամենեցուն»։

Տեսանէ՞ք զդթելն Պետրոսի և զհաս-

տատեն 'ի Պողոսէ, և ոչ զայլն 'ի նմանէ։

Որ՛վ եղբարք, հաստատեն 'ի բազումս բաժանի յեղանակս. բայց մեք զերիսս զայս առնլով 'ի մէջ, տեսցուք թէ ըստ որո՞մ յեղանակի հաստատէ զմետասանսն Պետրոս ըստ բանի Տեառն։ Արդ հաստատեն զայլս կամ ընդհանուր է, կամ մասնական. որ է իշխանական կամ յօրինակ լինել անձամբ և ոչ տիրելով՝ ըստ Պետրոսի. և զի հաւատարիմ բանս լեցի 'ի գրոց ցուցցուք։

Այ՛ արդ՝ ընդհանուր հաստատութիւն է, յետ ընդհանուր գայթակղելոյն և թերութեանն 'ի հաւատոց. որպէս և գրէ ընդհանուր Պողոս առ Կորընթացիսն «Այսուհետև եղբարք իմ սիրելիք հաստատուն եղերուք, անշարժ կացէք. առաւել լերուք 'ի գործս Տեառն». և դարձեալ՝ «Հոկեցէք հաստատուն կացէք 'ի հաւատս»։

Իսկ մասնաւոր, յորժամ մի ոք մեղանցէ. որպէս Կորընթացի մեղուցելոյն, զոր յետ Ջերմեռանդն ապաշխարութեան հաստատէ զնա գրելով «Շատ է, ասէ՝ այնպիսւոյն պատուհասն այն, աղաչեմ զձեզ այսուհետև հաստատել 'ի նա զսէրն», և կամ զոր առ Գաղատացիսն՝

«Եթէ ոք ըմբռնիցի յինչ և իցէ յանցանս, դուք որ հոգևորքդ էք, հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութիւն»։ Արդ ըստ երկուց յեղանակացս այսոցիկ, ոչ ուրեք ասի հաստատել Պետրոսի ըղձեստատանն, որ է իշխանական. և դուք ոչ կարէք ցուցանել՝ զի և ոչ յանցանք ինչ յիշատակի նոցա կամ ընդհանուր կամ մասնաւոր՝ յետ ընդունելոյն զՀոգին սուրբ։

Այլ ըստ երրորդ յեղանակիս ասեմք. որ է օրինական և ոչ իշխանութեամբ. որպէս դարձեալ ասէ առ Գաղատացիսն՝ թէ «Եթան սպրդողաց սուտ եղբարց՝ որք սպրդեցին մտանել զիտել զազատութիւնն մեր, զոր ունիմք ի Քրիստոս Յիսուս. զի զմեզ ծառայեցուսցեն, որոց ոչ առժամանակի անօտացաք հնազանդութեան. զի ճշմարտութիւն աւետարանին հաստատեսցի ի ձեզ», զոր արար և Պետրոս սպրդողաց սուտ եղբարցն, որք ասացին յայնմ գիշերի յորում յատեան ածաւ Տէրն, թէ «Եւ դու ի նոցանէ՞ ես, նա ուրացաւ՝ թէ ոչ», և զի կամեցան խոպտաւ ծառայեցուցանել ուրացութեան, կրկնեցին և երեքկնեցին. և իսկոյն հաւ խօսեցաւ.

և յիշեալ զբանն Տեառն՝ ոչ առ ժամանակ մի անսաց ուրացուԹեան. ելեալ ելից դառնապէս և հաստատեաց զնուա 'ի բանէ աւետարանին՝ զոր ասաց Տէր ԹԷ «Սիմոն Սիմոն ահա սատանայ խնդրեաց խարբաղել զձեզ իբրև զցորեան. այլ ես աղաչեցի վասն քո զի մի պակասեսցին հաւատք քո»։

Այլ պատմութիւն։

Ասաց Տէր ցերկոտասանսն, ԹԷ «Յայսմ գիշերի դուք ամենեքեան գայԹակղելոց եք յինէն. և Պետրոս յուրասաց եղև և ասէ՝ ԹԷ և ամենեքեան գայԹակղեսցին՝ սակայն ես ոչ. և նա ասէ, և դու երիցս ուրասցիս զիս», որպէս և եղևն։ Իսկ յորժամ տեսին մեռասանքքն՝ եԹէ դարձաւ Պետրոս, և ընկալաւ զնա Տէր՝ որ զմեծագոյնն յանցեաւ, հաստատեցան 'ի հաւատս ԹԷ ընդունի և զմեզ՝ անտես առնելով և զմերն գայԹակղուԹիւն։ Ոչ եղբարք այսպէս է հաստատելն Պետրոսի զեղբարսն՝ զոր ասաց Տէր. և ոչ ըստ կարծեաց ձերոց իշխանուԹեամբ։

Ասէ Տէր «Դու դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո». եղբարք կոչէ

նորա ըստ մարմնոյ զԻսրայէլ, զոր հաստատեաց բանիւ աւետարանին քարոզութեան. որոյ և վկայէ որ Քրիստոսիւն ասէր թէ «Որ յաջողեացն Պետրոսի յառաքելութիւն թլփատութեան յաջողեաց և ինձ 'ի հեթանոսս»։

Այլ պատասխանի։

'Նաև զաւաղանաւն կոչեալ եղբարսն հաստատէ՝ և այն կրկնակի. Նախ տպաշխարութեան օրինակաւ, զի և մեք հաստատեալ եմք 'ի հաւատս՝ թէ ըստ նմա և մեք գտանեմք զթողութիւն մեզ ապաշխարութեամբ. երկրորդ 'ի ձեռն ընդհանրական թղթոցն վարդապետութեան։

Այլ պատասխանի։

«Օ՛ի դու ասէ Տէր դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո» զորս յուցաք. և ոչ ասաց թէ հաստատեսցես զհաստատողսն սրբոց, վասն զի հաստատողք են և մետասանքն հանդոյն Պետրոսի որպէս վկայէ Պօղոս՝ որ Քրիստոսիւն խօսէր առ Եփեսացիսն թէ «'Նա եդ զոմանս մարգարէս և աւետարանիչս 'ի հաստատութի սրբոց, 'ի գործ պաշտաս

ման, 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի »։

Տեսանէք՝ թէ որպէս յամենայնի անզերկ պահէ զերկոտասանսն 'ի հասարակ իշխանութենէն, վասն որոյ և ոչ կարօտանամք այլում հաստատողն զմերն ուսնելով հաստատողս։

ԲԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Ասէ Եւիկաթն՝ վասն Պետրոսի ասէ աւետարանագիրն թէ « Հայեցեալ ընդ նա Յիսուսի՝ ասէ, դու կոչեսցիս Կեփաս », և Յովհաննէս յուսնարէն գրեալ զաւետարանն՝ Կեփալ ասաց որ է գլուխ, և նախանամութիւն ոչ ետ թայլ թարգմանել զանուն զայս յայլ լեզու, այլ նովին բառիւն պահեաց ցայժմ. զի ցուցցէ այսու գլուխ Պետրոս։ Եւ ըստ Կեփասն՝ որ թարգմանի Պետրոս, մ'ոչ յիշէր։

Պատասխանի. և արդ մի դուք, պարծանքս այս յոյժ է փցուն, և անտարակոյս։ 'Նախ՝ զի որ գրեացն նա ասաց թէ « 'Դու կոչեսցիս Կեփաս՝ և թարգմանեաց զնա Պետրոս », և 'ի Յուսնաց աւետարանն ցայժմ այսպէս է գրեալ. զի

ընթերցեալ այսպէս լուաք, և 'ի հմտա-
գունից արանց հարցեալ այսպէս ասա-
ցին. որպէս և գրեալն էր։

Ա՛յլ պապասխանի։

Եւ արդ զի այսպէս է գրեալ, ասա-
ցէ՛ք յաղագս որոց պիտոյից՝ ասաց ըզ-
կեփալն, թէ թարգմանի Պետրոս. Պետ-
րոսն յուներէն է և այս ոչ էր բնաւ
պիտոյ. իսկ եթէ ասիցէք, թէ կեփալ
'ի կեփալ ասաց թարգմանել, նա և այս
անմտութիւն՝ զգլուխ 'ի գլուխ թարգ-
մանելն 'ի մի և 'ի նոյն բարբառ, զոր
մեզ պարտ էր առնել զայս՝ որ թարգ-
մանեցաք 'ի մեր լեզուս։

Եւ դարձեալ՝ եթէ Յովհաննէս 'ի
Տեառնէ գլուխ լուաւ և քար թարգ-
մանեաց, այս ոչ միայն յիմարութիւն
այլ և ստութիւն և թերութիւն մա-
ծանէ յաւետարանն, և անհաստատ ցու-
ցանէ զբոլորն՝ զոր մի լնցի։

Իսկ եթէ զոր լուաւն Կեփաս Եբրայե-
ցերէն, և ասաց թէ՝ որ թարգմանի յու-
նարէն Պետրոս որպէս և գրեալէ 'ի նո-
ցայն և 'ի ձերդ՝ և յամենայն ազգաց ա-
ւետարանն. ընդէ՞ր զրպարտէք զՀիմար-
ութիւնն, և ասացէք նախախնամու-

թեանն պահել զբանն. զինչ առաւելութիւն ունի յուսարէն կեփալն՝ ի վերայ գլխոյն հայերէն. ոչ զմի և զնոյն նշանակեն իր. ահա ընդվայր մտածուի։

Իսկ թէպէտ և տամք ըստ ձեզ գըլուխ գոլ ասացեալ, ասացէք ո՞ւմ է գլուխ. զի ամենայն գլուխ անձին է գըլուխ, և որ ասացն՝ ըստ ձեզ զանձն ոչ ցուցանէ, որպէս և յարածեա՛ ասելն զոչխարսն. և զի ոչ է անձն՝ ապա և ոչ գլուխ, որպէս ձեզ թուի. և ընդէ՞ր ստուերամարտ լինիք զոդ հարկանելով կարծէք յաղթիկու լինել զոր ոչն տեսէք։

ԲԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ասէ Լիկաթն, ընդ Պետրոս միայն ասաց Տէր՝ թէ «Արածեա՛ զոչխարս իմ». և զայս անլուծանելի ասեն գոլ նշանակ իշխանութեան։

Պատասխանի. Նախ տեսցուք թէ այլ բան համազօր այսմ բանի գտ՞ցաւ ետարանն՝ թէ ոչ. և թէ այլ ի՞նչ նշանակէ արածելն քան զաշակերտելն. և զի ոչ այլ ինչ ցուցանէ՝ վկայէ Եղեկիել որպէս ի դիմաց Աստուծոյ, թէպէտ և

'ի հակառակէն. «Այսպէս ասէ Տէր՝ ո՛ հովիւք Իսրայէլի. միթէ հովիւք զանձինս արածեն, ո՞չ հովիւք զոչխարսն արածեն, արդ ահաւադիկ զգէրսն զէնէք՝ զասրն զգենուք և ուտէք զկաթնն, և զխաշինս իմ՝ ոչ արածէք». որպէս և այժմ, և ոչ ոք է՝ որ յանդիմանէ։ Արդ եթէ յայտ եղև թէ նոյն է արածելն և աշակերտելն, ապա ոչ է տեսանել մեզ միայն զբառիցն զանազանութիւն, այլ զմտացն դիտաւորութիւն. քանզի սովորութիւն է փրկչին զմի և զնոյն իր բազմազան բառիւք նշանակել՝ որպէս զարքայութիւն երկնից ուռկանիւ և գանձիւ և մանանեխիւ, այսպէս և զքարոզութիւն աւետարանին, զոր ասա արածեա զոչխարսն ասաց՝ այլուր հուն՝ ձրս կոչեաց, և հարսանեաց նմանեցոյց պատրաստութեան. և 'ի Հօրէ և յիւրմէ ասաց հանել և առաքել զմշակսն և զծառայսն. և ոչ մշակ մի և ծառայ որպէս ձեզդ թուի, այլ հասարակ զերկուսասանսն. ժողովել զորայն և ածել 'ի հրապարակացն զկուրացեալսն յիսկապէսն լուսոյ՝ 'ի լոյս գիտութեան ճշմարտութեան որպէս և էին կոչեցեալ լոյս աշխարհի։

Ա.Յ. պապափանի։

Դարձեալ տեսցուք, թէ զի՞նչ արօտն իցէ. զի մի զհոսանուտս զայս կարծեսցուք և զդալատէս զարածելն. և եթէ այլ ո՞ք իցէ յայսմ արօտի արածող՝ թէ Պետրոս միայն։ Լաւ արդ՝ է արօտն ըստ ինքեան կերակուր. և եթէ կերակուր է, յայտ է՝ թէ զանազանեալ է ըստ կերողացն. որպէս անբանիցն է զդալին խոտ՝ այսպէս և բանաւորացս բանն Աստուծոյ և իմաստութիւն. որպէս ասէ սուրբն Դաւիթ յեօթանասներորդ եօթներորդ Սաղմոսին, թէ «Հովուէր զԻսրայէլ, և արածէր զնոսա իմաստութեամբ սրտի՝ և անմեղութեամբ ձեռաց առաջնորդէր նոցա», և Տէրն՝ թէ «Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւն Աստուծոյ»։ Արդ՝ զբանն իւր Բանն Աստուած ոչ միայն Պետրոսի ետ, այլ և ընկերացն նորա հասարակ 'ի Գալիլէա՝ ուր ժամադիրն եղև տեսանել զնոսա. որպէս և գրեալն է, իբրև ետես զնոսա՝ ասէ «Դնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս. ուսուցէք նոցա զբանն իմ զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ», և թէ «Հոգին սուրբ եկեալ ու-

սուսցէ և յիշեցուսցէ ձեզ զբանն իմ»։ Եւ զիմաստութիւն ետ և ասէ ցհրեշտակն՝ «Ուրաքեցից 'ի ձեզ իմաստունս զորս սպանանիցէք։ Եւ Պօղոս, թէ «Մեք քարոզեսցուք զխաչեալն Քրիստոս՝ որպէս հրէիցն գայթակղութիւն, այսպէս նոցին կոչեցելոցն՝ զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութի»։ Եւ զի արօտ է քարոզութիւն, նոյն ինքն ցուցանէ Պօղոս՝ «Տղայաբարոյիցն կաթն ասէ ջամբեցի, իսկ կրթեցելոցն ճաշակելեօք հաստատուն կերակուր»։

Տեսանէ՞ք, թէ ուրպէս հասարակ ցուցան արածող. զի զոր անդ արօտ ասաց Քրիստոս զաւետարանն՝ որ Քրիստոսիւն խօսէր, ջամբումն և կերակուր ասէ։

Այլ պապասխանի։

Ով տեսրք, ահա՛ և ոչ յայսմ մասին զրկէ Տէրն զմետասանան. զի ասաց թէ «Ուրածեա՛ զոչխարսն» և ոչ զհովիւսն. վասն զի հովիւք են և այլ համակարգքն նորա աշակերտքն և արածող նման նըմա, վկայէ Պօղոս առ Եփեսացիսն և ասէ՝ «Նա ետ զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս»։

Տեսանէ՞ք՝ թէ ուրպէս յայտնեաց թէ

ոչ այլ ինչ է հոլուելն և արածելն, քան զվարդապետելն. և անզանազան եցոյց արպէս յամենայնի, և յայսմ զերկուսանանն. իսկ յոր արօտ ասէք արածել Պետրոսի զբանաւոր ոչխարան Քրիստոսի, ցուցէք զբարձրագոյնն քան զամենասանիցն որով պարծիքդ. իսկ եթէ ոչ կարէք ցուցանել այլ՝ քանզի ոչ գոյ այլ աւետարան, դուք ինքնին վկայէք թէ մի և նոյն են իշխանութեամբ։ Ինքէ անխախտելի որդին Աստուծոյ Հարբ ըզվիրութիւն իշխանութեան նոցա, ասելով "Հայր եղիցին և սոքա մի, որպէս և մեք մի եմք"։ Արդ եթէ ըստ Հօր և Որդւոյ հաւասար ունին զպետութիւն եկեղեցասանքն ըստ Տեառն բանին, յայժ է յանդգնութիւն մուծանել 'ի նոսա առաւելութիւն և նուազութիւն. զի այն 'ի Հայր և յորդի վերաբերի. և զարիոսին ախատանն մոլութիւն զանխաբար սինպիսուոյն խորհողքն։

Ա. յլ պատասխանի։

Այլ զի ասայ, արածեա՛ զոչխարս իմ. հաւատայ յատուկ զառաքելութի թըլփատութեանն Պետրոսի, իւր կոչելով ոչխարս. ըստ այնմ թէ "Ոչ ուրեք ա-

ռաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի», և թէ «յիւրսն եկն». որպէս Պօղոս վկայէ առ Գաղատացիս զյատկութիւն, թէ «Իբրև տեսին կարծեալ սիւնքն՝ թէ հաւատացեալ է ինձ աւետարանն անթլփատութեան, որպէս Պետրոսի թլփատութեան». և արդ ոչ հաւատացաւ թէ ոչ յայսմ վայրի, ցուցէք՝ զի ոչ ստէ վկայն ճշմարիտ։

Իսկ եթէ ասիցէք՝ թէ հեթանոսք ոչ են ոչխարք Քրիստոսի. թէ այսպէս իցէ, ապա զնի՞վ արածեն մեռասանքն. ասեմք թէ՝ այո՛ և հեթանոսք. զի զնոսա կոչեաց ասելով «Եւ այլ ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր. և եղիցին մի հօտ և մի հովիւ». և Պօղոս վկայէ թէ «Ձի՞նք իսիր ոչ հրեի և ոչ հեթանոսի. զի ամենեքին դուք մի էք ՝ի Քրիստոս Յիսուս»։ Տեսանէ՞ք՝ թէ ո՛րպէս ցուցաւ ըստ միութեան ոչխարացն՝ մի իշխանութիւն արածողացն։

ԲԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Ասէ Լիկաթն, որ և այս մեծութիւն է նորա՝ զի զմահն նշանակեաց Քրիստոս. ասէ «Յորժամ ծերասցիս՝ ձեռս 'ի վեր կալցես՝ և այլք ածցեն քեզ գօտի, և տանիցեն զքեզ՝ ուր ոչն կամիցիս. նշանակեալ թէ որով մահու փառաւոր առնիցէ զԱստուած»։

Պատասխանի. նախ զի յաղագս երկոտասանիցն իշխանութեան անզանազանութեան է առաջարկութիւնս մեր, և ոչ մահու որպիսութեան. զի մահն ոչ եթէ հաստատութիւն տէրութեան է, այլ 'ի բաց բարձումն կենաց և իշխանութեան. զի յետ ելիցն ոչ ումեք իշխէ, և ոչինչ ունի դիտաւորութիւն այս 'ի բանս մեր։

Ա՛յլ պատասխանի։

Իսկ եթէ մեծութիւն թուի ձեզ. ապա ոչինչ նուազ երևին յայսմ մասին և մետասանքն վասն նոյն գունակ նշանակելոյն և զնոցայն մահ՝ ըստ գրեցելումն, թէ «Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց». և թէ՝ «Մատնեսցեն զձեզ յատեանս

և 'ի Մոլովուրդս տանջիցեն և 'ի խաչ հանիցեն զձեզ՝ և սպանանիցեն », և թէ « Որ սպանանիցեն զձեզ՝ համարիցին պաշտօն մատուցանել Աստուծոյ », և թէ « Մի երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին » : Այլ արդ զի՞նչ ասէք, միթէ ոչ են մահու նշանակք այսոքիկ : Այլ ոչ վասն տանջանացն զանազանութեան ասէ՝ զորով փառաւորելն զԱստուած . զի բազմազանքն զմի և զնոյն ունին կատարած , զմարմնոյն միայն մեռանիլն , որպէս ասաց Տէր : Այլ վասն մահուն սրպիսութեան , որ է ելք՝ քանզի յերկուս բաժանի մահ մարդոյ . 'ի չար և 'ի պատուական . որպէս ասէ մարգարէն Դաւիթ յերեսներորդ երրորդ Սաղմոսին , թէ « Մահ մեղաւորին չար է » , և 'ի հարիւրերորդ տասներորդ հինգերորդ Սաղմոսին , թէ « Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց » . վասն որոյ 'ի բաց հանէ 'ի նմանէ զչար մահուն երկիւղ և ասէ , պատուական մահուամբն մեռանիլ որով փառաւորի Աստուած : Այլ զի յատուկ ասէ ց Պետրոս՝ հասատասէ զնա վասն դիւրափոփոխ գոլոյ բարուցն . որպէս 'ի ժամ չարչարանացն՝ եթէ 'ի խնդրելն սատանայի , ես

աղաչեցի վասն քո, և զայս ոչ ոք յան-
դգնի ասել, թէ մեռանիցն ոչ փա-
ռաւորեցին զԱստուած մահուամբ. և
զի մի են ելք նոցա՝ միապէս և զմրցա-
նակն խոստացաւ նոցա Տէրն. «Դուք
ասէ, որ եկիք զկնի իմ՝ ի միւսանգամ
գալստեանն յորժամ նստցիմ յաթոռ
փառացս իմոց, նստջիք և դուք յերիսուն
սան աթոռս դատել զԻսրայէլ». որ է
բանս այս զոդ կատարման անդանաղա-
նութեան նոցա, որպէս անդ՝ ըստ այ-
նմ և ասա, և եթէ ոչ անդ՝ և ոչ ասա,
և բոլորն բարձաւ ձերդ իշխանութիւն
ստելով զճշմարտութիւնն։

ԳԼԽԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ասէ Եղիկաթն, ոչ ահա մեծի իշխա-
նութեան ցոյցք է որ պատմի ի գործս
առաքելոցն, թէ «Յաւուրսն յայնոսիկ
յարուցեալ Պետրոս ի մէջ եղբարցն,
ասէ. ամբք եղբարք պարտ է կատարել
գրոյն վասն Յուդայի, որ հասեալ էր
նմա վիճակ պաշտամանս մեր. սա ու-
ուուցեալ հերձաւ. արդ պարտ է յա-
ռանցս որ ընդ մեզս են, վկայ յարու-

թեանն Քրիստոսի լինել ընդ մեզ»։

Պատասխանի. բաբէ իմաստուԹեդ ձեր. զի զկատարելապէս հաւատարուԹեան զյայտնուԹիւնն ոչ իմանայք, զի զկրատն տալ իբր 'ի մեծուԹիւն յիշէք զնորա, և զոչն կարել ձեռնադրել յաստիճան երկուասանիցն զոք վասն համակարգուԹեանն՝ ոչ ածէք զմտաւ։ Զի այս է իշխանին յառաջ ածել զընտրեալսն՝ յորոց տուեալն է 'ի Տեառնէ ընդ իւրով իշխանուԹեամբ, և ապա իշխել իւրոց վիճակելոցն. զոր ոչ ընկալեալ 'ի վերայ մետասանիցն, որպէս ինքքն ցուցանէ յԱստուած վերաբերելով զընտրուԹիւնն ըստ ինքեանց 'ի Տեառնէ, և 'ի Հոգին սուրբ զզօրուԹիւն ընդունելուԹեան. այլ և զայս ոչ կարէք ասել՝ Թէ ոչ ունէր իշխանուԹիւն ձեռնադրուԹեան, զի Թէ ոչ Պետրոս՝ և ո՞ այլոք. բայց որոց տուաւն՝ զոր այժմ ունիք։ Իսկ եԹէ ասիցէք անկատար գոլ, Թէպէտ յետ յարուԹեանն վասն չև ևս ընդունելոյ զՀոգին սուրբ, ապա զի՞ պարծիք անկատարիւքն իբր կատարեալք. իսկ եԹէ կատարեալ՝ որպէս և էրն, ընդէ՞ր ոչ խոստովանիք զհաւատարուԹիւնն։

Այլ պատասխանի։

Դարձեալ հարցանեմք վասն իրաւունս. ասացէք՝ եթէ զինչ նշանակէ իշխանութեան, որ և նուաստագունիցն պատահէ առ յոյժ բարձրագոյնսն, որպէս և ունիմք զսոյն 'ի գրոց ցուցանել յելիցն։ Արդ յորժամ եկն Յոթոր անեղբն Մովսէսի առ Մովսէս՝ և ետես զնոսա զառատանս նորա 'ի բաղում հոգոցն որ յամբոխէն, ասէ ցՄովսէս. "Ոչ է ուղիղ բանդ՝ զոր առնես, անհնարին տանջանք է քեզ և ժողովրդեանդ. ոչ կարես միայն առնել՝ ես տաց քեզ իրատ. լէր դու ժողովրդեանդ առ 'ի յԱստուծոյ, և տարցես զբանս դոցա առ Աստուած. և դիցես դոցա վկայութիւն զհրամանացն Աստուծոյ և զպատուիրանաց նորա. ընտրեա՛ արս Աստուածապաշտս որ հեռի իցեն յամբարտաւանութենէ, և կացուսցես հազարապետս մինչև ցտասնապետս, և թեթև ասցի 'ի քէն և այլ ևս յոլովս։ Լու լուաւ Մովսէս ձայնի անեղոյն, և արար որպէս ասաց նմա"։ Արդ մե՞ծ ասես զՅոթոր քան զՄովսէս զաստուած կոչեցեալն 'ի Տեառնէ. զի և տարերք ոչ ելանէին ընդ հրամանս նորա. և զինչ է զայս ասել առ ծայրագոյնն իմաստութիւն՝ որ և եղևն։

Ի Գրոց Թուոցն։

«Ասէ Տէր ցՄովսէս, մինչև ցե՞րբ բարկացուցանէք զիս ժողովուրդդ. Թոյլ տուր ինձ, զի հարիցս զդոսա մահուամբ. և ասէ Մովսէս. Տէ՛ր՝ իսկ արդ լուիցեն Եգիպտացիքն և ամենայն ժողովուրդ երկրիս, Թէ դու Տէր 'ի ժողովրդեանս յայսմիկ ես. և սեամբ ամպոյ երԹաս դու առաջի դոցա 'ի տուէ, և սեամբ հրոյ 'ի գիշերի, և սատակեսցես զժողովուրդս զայս իբրև զայր մի՝ խօսեսցին ազգք, որ լուիցեն զքէն և ասիցեն. վասն զի ոչ կարէր Տէր տանել զժողովուրդն զայն յերկիրն՝ զոր երդուաւ նոցա յանապատին. և ասէ Մովսէս, արդ բարձրացի ձեռն քո Տէ՛ր, Թո՛ղ զմեղս տոցա ըստ մեծի ողորմութեան քում. որպէս ներեցեր դոցա յԵգիպտոսէ մինչև ցայժմ. և ասէ Տէր ցՄովսէս՝ ներեցիցս դոցա ըստ բանի քում։ Եւ արդ զի՞նչ ասէք սա այս, միԹէ մեծ ումն է Մովսէս քան զԱստուած, զի ետ Տեառն զիսրաստս զայս, յորոց զբազում մն կարձեցաք վասն յերկարութե։ Ահա անվանեալ ցուցաւ և այս, և այն կրկնակի։

Համառօտ պատասխանի չարիցն բանից 'ի յեօթանցն զոր ասաց Տէր առանձնական ցՊետրոս։ զոր կարծեն մեծութիւն գալ նմա։ և նովաւ ինքեանց՝ հռովմայեցիք. զի երբեքն այլ ոչ ասն զօրութիւն կարծեաց նոցա՝ թէպէտ և ոչ այսոքիկ։ Եւ համեմատութիւն ընդդէմ՝ նոցին 'ի նուաստացուցիչ ասացելոցն։

Իսկ եթէ ասիցեն հռովմայեցիքն, եթէ ոչ ետ կրկին իշխանութիւն Պետրոսի Քրիստոս՝ ընդէ՞ր զմեծամեծ բանս զայսոսիկ բաց յընկերաց նորա ասէ ցնա։

Այլ որս ասացուք նախ՝ թէ ոչ նորոգ ինչ ետ պարգևս նմա, այլ 'ի տուեցելոցն հասարակաց՝ կրկնեաց առ նա. և այսոքիկ որք միտս ունին, նուաստութեան և անհաստատ լինելոյ են ցոյցք նմա՝ և ոչ կրկին իշխանութեան և վեհագունութեան մետասանիցն, վասն անխախտ կալոյ մնալոյ 'ի տուեալ իշխանութիւնն նոցա 'ի Տեառնէ։

Իսկ դուք բարձրացուցանողքդ պարծիք, և զնուաստացուցանողքն զանց առնէք, և զի ասաց թէ "Դու ես վէմ" և զայլն զմոռաւ ածէք. և զոր ասաց թէ "ատամնայ իմ ես" և զնմանն սորա ոչ յիշէք, զի որ ասացն թէ "դու ես վէմ, և յայդր վերայ շինեցից զեկեղեցի իմ"

նա ասաց թէ «ստուանայ ես իմ և գայթակղութիւն ես իմ». և որ հրամայեաց թէ «Տաց քեզ զփականս արքայութեան երկնից» նայն ինքն բարբառեցաւ թէ «ոչ խորհիս զԱստուծոյն» այսինքն զարքայութեանն։ Այլ որ խօսեցաւ առ նա թէ «դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո» նա կոչեաց զնա «թերահաւատ և երկմիտ»։ Այլ որ մակայաւել երիցս թէ «Ուրացեա՛ զոչխարս իմ», նա գուշակեաց զնմանէ թէ «երիցս ուրացիս զիս»։

Տեսանէք՝ թէ որպէս համեմատեցան միմեանց կողմանքն երկոքեան, և այսոքիկ ասացան 'ի նախախնամութենէն Աստուծոյ. զի մեծամեծքն դեռևս են 'ի հաստատութիւն վերսին՝ և 'ի նորոգումն նուաստացուցանողացն, և 'ի հաստումն երկուց մեծ ախտից՝ բարձրայօնութեան և գայթակղութեան. զի գուք մի՛ մեծոքն ամբարտաւանեսջիք, որպէս կրկդ 'ի ձեզ՝ և այլք մի՛ ներհակաք գայթակղեսցք նուաստ համարեսցին զՊետրոս քան զընկերսն։

Իսկ եթէ ասիցէք թէ, Աստուած անզեղջ է 'ի բարեսրութիւն, և անդիշաչար 'ի սխալանս 'ի զղջանալն. այո՛

զի որ ոչ հաւատայ այսմ, եղիցի ունայն 'ի լաւագոյն զօրութենէն. այլ եթէ ոչ էր արժան յիշել զնուաստագոյնսն յայսմ վայրի՝ և ոչ արժան ընթեռնուլ յաւետարանսն։

Այդ հարկ է ձեզ կամ տրոհարկել ոչ ընթեռնուլ յեկեղեցի և մեղադրել Հոգւոյն սրբոյ խօսողին զբանս զայսոսիկ՝ և կամ արտաքս հանել 'ի գրոցն։ Իսկ եթէ այս անհնար է, զի Հոգին սուրբ գրովք ետ արձանացուցանել մշտնջենաւոր յարակայութեամբ. ապա հարկ է ոչ զանց առնել որպէս զմեծամեծքն՝ սոյնպէս և զփոքրումքքն ըստ հասարակ գրբեցելումն։ Իսկ եթէ փոքրունքն ոչ են 'ի պատճառս նուաստութեան, և ոչ մեծամեծքն 'ի պատճառս բարձրայօնութեան. և եթէ ոչ այն, և ոչ այս՝ ապա յերկուցն է մեզ հրաժարելի յախտիցն ասացելոց, և զմիջինն ընթանալ պողոտայ անխոտոր՝ և երկոտասանական իշխանութեամբն միայն պատուել զՊետրոս. վասն զի այս իսկ են կամք երանելեացն դասու՝ որ յամենայն ուրեք հաստարակութեան աշակերտեցան, ըստ այնմ թէ «Յմենեքին դուք եղբարք էք» և թէ «Հայր եղիցին և սաքա մի, որպէս

և մեք մի եմք » և մեզ զնոյն ուսուցին, թէ « Յոր կոչեցարուքն՝ 'ի նմին կացջիք » . և թէ « Յամենայնի որ է 'ի ձեզ մի ինչ առաւել խորհելքան զարժանն, այլ խորհիլ 'ի զգաստանալ » . 'ի հաւատացեալսն իւրաքանչիւր ումեք 'ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ . որում ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյն փառք՝ իշխանութիւն և պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ

Յաղագս անպանծանութեան առ Մեսիան երկոտասան առաքելոյն, և հասարակ ընդունելոյ 'ի Քրիստոսէ զիշխանութիւն, և ինքնագլուխ գոլոյ խրատանչելոյն ընդդէմ հռովմայեցւոցն վկայութեանց՝ զոր առանձինն առնուն 'ի Պետրոս։

Ա. Նախ՝ հասարակ ասաց Քրիստոս, «Դուք էք աղ երկրի» առ 'ի բառնալ զանհամութիւնս նոցա։

Բ. «Եւ դուք էք լոյս աշխարհի» անծածկելի առ 'ի փարատել զխաւարն անդիտութեան 'ի բոլոր տանէս։

Գ. «Եւ զերկոտասանսն կոչեցեալ առինքն, ետ նոցա զօրութիւն և իշխանութիւն 'ի վերայ ամենայն դիւաց և ցաւոց. և առաքեաց քարոզել զարքայութիւնն Աստուծոյ»։

Դ. Եւ նոցա միայն ասէ Յիսուս «Ամէն ասեմ ձեզ. զի դուք որք եկիք զկնի իմ, 'ի միւսանգամ գալստեան իմում՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառացս իւրոց, նստջիք և դուք յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազգսըն Իսրայէլի»։

Տեսանէք՝ թէ ո՛րպէս ընդ իւր ցուցանէ անզանազան զնոսա առ միմեանս. որպէս ասա՝ և անդ. և որոշէ զնոսա յայլոց զհետ ընթացելոցն, թէ և նոքա ասէ հարիւրապատիկ առնուն և ըզյաւիտենական կեանսն. բայց աթոռ ոչ խոստանայ վասն անհամեմատութեանն։

Ե. Եւ նոցա հաւասար ասէ «Զեզ սուեալ է գիտել զխորհուրդ արքայութեան երկնից». զի՞նչ մեծագոյն իշխանութիւն ասիցէ ոք գոլ քան զայս. և զայս՝ որով նոքա պարծին մեծ գոլ, նա ամենեցուն ետ։

Զ. «Ամէն ասեմ ձեզ, զի զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»։

Է. «Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ, տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր՝ և ես առաքեմ զձեզ. գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս՝ մկնքեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէք նոցա զամենայն զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ես ընդ ձեզ եմ մինչև 'ի կատարած աշխարհ

հի ». և այս բարձրագոյն և աններհակ վկայութիւն ։

Ը. « Լոյս եհան զնոսա 'ի Բեթանիա և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա » ։

Տեսանէք զի ինքն ձեռնադրեաց զնոսա, և եցոյց զինքն միայն նոցա իշխող՝ և ոչ զՊետրոս կամ զայլ ոք ։

Թ. Լոյս թէ՝ « Ուր եսն իցեմ, և դուք անդ իցէք, և ուր երթամն գիտիցէք. և զճանապարհն գիտիցէք » ։

Ժ. Լոյս թէ՝ « Դուք տեսանէք զիս, զի ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք » ։

ԺԱ. « Դիտասջիք զի ես 'ի Հօր իմում, և դուք յիս՝ և ես 'ի ձեզ ». արդ որ զանհամեմատս զայս իշխանութիւն գիտութեան՝ բնակութեան արքայութեանն ետ նոցա հասարակ, զիարդ 'ի փոքունս առաւել կամ նուազ առնէր զնոսա ։

ԺԲ. « Այլ զձեզ կոչեցի բարեկամս. զի զամենայն զոր լուայ 'ի Հօրէ իմմէ՝ ծանուցի ձեզ » ։ Արդ եթէ զամենայն հասարակ ծանոյց երկոտասանիցն, ապա Պետրոսի միայն զի՞նչ ծանոյց. զի զանտանելին ոչ ումեք ծանուցանէ վասն յոյժ խնամոցն ։

ԺԳ. ՅԻ ԹԷ՝ «Յս ընարեցի զձեզ՝ և եդի զձեզ, զի դուք պտղաբեր լինիցիք, և պտուղն ձեր կացցէ» նմանապէս ասէ կեալ քարոզութեան նոցա։

ԺԴ. ՅԻ ԹԷ՝ «Հայր սուրբ պահեա զնոսա յանուն քո որով եառուրն ինձ. զի եղիցին մի՝ որպէս և մեք մի եմք. և ի վերայ բերէ, թէ քո բանդ ճշմարտութիւն է»։

ԺԵ. «Որպէս զիս առաքեցեր յաշխարհ և ես առաքեցի զնոսա յաշխարհս», ամենեին աններհակ եցոյց զմի իշխանութիւնն, զի նախ միացոյց Հարբ՝ և ապա առաքեաց յաշխարհ, և կարկեաց զբերանս զանազանողացն։

ԺԶ. ՅԻ ԹԷ՝ «Ընդ գիտացին զի զամենայն ինչ զոր եառուրն ինձ՝ եառ նոցա. և նոքա ընկալան, և եառ նոցա զբանն քո», կրկնեաց վասն առաւել հաստատութեան։

ԺԷ. «ՅԻ զայս իբրև ասաց, փչեաց ի նոսա. և ասէ, առէք Հոգի սուրբ. եթէ զուրուք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի, և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի», ըստ հաստարակ ընդունելոյն զՀոգին՝ ետ և զիշխանութիւնն. միապէս պատուիրեաց զօրութիւն ընդ

դունել 'ի բարձանց՝ միտրակ զհրեղէնն ընկալան զլեզուսն. և կնքէ անլուծանելի կնքով և անսպրդելի 'ի ներհակաց զխորհուրդ բանիս Հարբ՝ զի ասէ. «Լուր ես զփառսն զոր ետուր ինձ՝ ետուս նոցա. զի եղիցին մի՝ որպէս և մեք մի եմք. ես 'ի նոսա՝ և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի»։ Արդ զոր փառս ետ Պետրոսի արտաքոյ այսր. զի այն արտաքոյ է 'ի նմանութենէ Հօր և Որդւոյ միութենէն. և այս ոչ է բարեկամութիւն Պետրոսի՝ այլ ներհակն նորին. մի գուցէ լսիցեմք 'ի Պետրոսէ, թէ որ զեղբարս իմ նուաստացուցանէ՝ նուաստացուցանէ և զիս. և զի այսպէս է 'ի հաւատարսն, որպէս և Քրիստոս հրամայէ թէ «Որ ուրանայ զՈրդին և զՀայրն ուրացեալ է», և Տէրն ասէ թէ «Որ զձեզ պատուէ՝ զիս պատուէ», զձեզ ասէ՝ և ոչ զՊետրոս միայն. նոյնպէս և հակառակն սորին։ Արդ որովհետև այսքան շուրջ զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայութեանցս՝ 'ի բայ ընկեսցուք զամբարտաւանութիւն, որ է մայր խռովութեան. և զհաւատարութիւն տացուք նոցա ըստ Քրիստոսի, և մի անարգեսցուք, այլ պատուեսցուք

նոցայովքն զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, որում փառք յաւիտեանս։

Յոլովս ունէի գրել՝ այլ երկեայ 'ի տաղտկութենէ լսողացն զի ատեցողք են բանի։

Վասն Հայոց եկեղեցւոյն զի հաւասար է Հռովմայ եկեղեցւոյն և Եփեսոսի, որ այժմ անպատուի 'ի Յունաց, վասն համապատուութեան Առաքելոյն մերոց։

Եւ արդ՝ եթէ ասեն Յոյնք և Հռովմայեցիք որպէս յառաջագոյն՝ և այժմ ցՀայս, թէ դուք որո՞վ պարծիք մայրաքաղաքաւ կամ ո՞ եկն առ ձեզ յերկոտասանիցն. զի ասէք զձեզ հաւասար մեզ. զի որ եկն առ ձեզ յառաքելոցն Թադէոս յեօթանասնիցն և ոչ յերկոտասանիցն է, և դուք անագան ուրեմն դարձայք 'ի Քրիստոս՝ և ոչ զհետ մեր։

Առ որս ասասցուք նախ՝ թէ մեք ոչ պարծիմք մայրաքաղաքաւ. զի աշխարհական է, վասն որոյ ասէ Տէր թէ "Դուք էք յաշխարհէ՝ որպէս և ես եմ", և եթէ "Ի՛մ արքայութի՛ւն չէ՛ յաշխարհի"։

= 67 = ։

Եւ մեք յանաշխարհիկն պարծիմք. այլ և զոր գոյն՝ քանզի ցին թշնամիք խաչին Քրիստոսի արտասահմանեալ զմեզ, կապարեալ 'ի մեզ բանին Տեառն, եթէ «Յաշխարհի ասա զնեղութիւն ունիցիք. այլ քաջալերացարուք՝ զի ես յաղթեցի աշխարհի». և մեր խրախուսեալք 'ի նա՝ պարծիմք և ս ըստ Պօղոսի 'ի նեղութիւնս մեր որ վասն նորա։

Եւ զոր ասէքդ զԹադէոս յեօթանանիցն գող, զայդ ոչ յառաքելական մատեանց ասէք ուսոյ տրամաբանութիւնս մեր, այլ 'ի վիպասան պատմագրաց. իսկ յաւետարանին՝ Մատթէոս և Մարկոս յերկոտասանիցն զնա թուեն, և անուանն փոփոխմամբ և ս՝ զնա պատուեալ Տեառն որպէս զՊետրոս և զորդիսն Որոտման։ Իսկ թէ ասէք, թէ Ղուկաս ոչ յիշէ զնա ընդ նոսա, ոչ է զարմանք՝ թէ այլով անուամբ նշանակէ ըզնա. զի նոքա ոչ եթէ հակառակք են՝ զի եկեղեցիք են Աստուծոյ. իսկ եթէ դուք հակառակիք՝ ապա երկուցն վկայութիւն հաւատարիմ է քան զմիոյն ըստ հրամանի Տեառն։

Իսկ թէպէտ և ըստ կարծեաց ձեր ասեմք զնա յեօթանասնիցն գող,

սակայն ոչ նուազիմք 'ի ձէնջ զի ահա Բարթուղիմէոս. և Յուդայ Յակոբեան, և Սիմոն Նախանձայոյզ վիճակեցան ազգիս Հայոց։ Իսկ եթէ ասիցէք թէ նոքա այլոց ազգաց՝ և ոչ ձեզ վիճակեցան. ցուցէք՝ թէ ո՞ւմ, և հաւանիմք ձեզ. զի 'ի Քրիստոսէ որ տուողն է իշխանութեան՝ ոչ կարէք. զի նա բացարձակ հրամայեաց նոցա, թէ «Գնացէք աշակերտեցէք զամենայն հեթանոսս» անզանազան. զի ուր կատարեսցին մահուամբ, նմին ազգի եղիցի իշխանութիւն նոցա առանց ամենայն հակառակութեան։ Այլ դարձեալ՝ թէպէտ և տամք ըստ ձեզ ըստ ազգացն և զառաքեալսն բաժանեալ, այլ նոքա օրինակ ինքեանց ունելով զՔրիստոս, և խրատեալք 'ի նմանէ՝ թէ «Յինէն ուսարուք» և ուսուցանէր ասելով՝ «Ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի». և Յովհաննէս թէ «Յիւրոն եկն՝ և իւրքն զնա ոչ ընկալան, իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն Որդիս Աստուծոյ լինել». Նոյնպէս և աշակերտքն նորա յիւրեանցն գնացին վիճակ. և ոչ ընկալեալ զնոսա, դարձան 'ի նոցանէ ըստ հրամանի Տեառն «Թո-

թափեալ զվուշն ոտիցն ի նոսա ի յանդիմանութիւն նոցա. իսկ առ որս գնացեալ և ընկալեալ եղեն՝ ետուն նոցա զիշխանութիւնն, զոր առին ի Տեառնէ ըստ նորին հրամանի թէ որպէս «Զրի առիք և ձրի տուք». և օրինակ մեզ Պետրոս. զի նորա յատուկ էր որոշեալ վիճակ ի Տեառնէ թլփատութիւնն. և զի ի Հռովմայեցւոցն ընկալաւ զյաղթանակ մարտին դարձեալ ի նոսա. իսկ այժմ՝ Հռովմայեցւոց առաքեալ է, և կոչի. Նոյնպէս և Բարդուղիմէոս և այլքն զոր ասացաք, մեզ են՝ և ասին։ Իսկ եթէ նոքա ոչ մեզ, և ոչ Պետրոս նոցա. ապա եթէ Պետրոս նոցա, Բարթուղիմէոս և այլքն մեզ առանց հակառակութեան։ Իսկ զոր ասէք անագան դառնալ մեզ՝ և այդ յիրաւի. զի ի մետասանեերրորդ ժամու. և այս ոչ ի հեղգութենէ մերմէ, այլ ի կոչողին ձայնէ էաք վերջնոտեալք. և այս յայտ ի տանուտեառնէն է՝ զոր արարն. զի յորժամ յայց ել մեզ ի մետասանեերրորդ ժամու՝ և կոչեաց զմեզ ըստ ողորմութեան իւրում յայգին իւր ի ձեռն առաքելաշնորհ առնն Աստուծոյ սրբոյն Գրիգորի Պարթևին, հաւատարեաց զյոժարու-

թիւն մեր ընդ քրիստոնց առաջնոյն 'ի սուրս վարձին, զոր յաչաղեալ առաջնոյն։ Լու ոչ անզգամութիւն՝ զոր զկնի սորա ասեմք, զի զՃշմարիտն ասեմք, թէ վերհագոյն պատուեաց զանագանեալս. զի վասն յաչաղելոյն զվերջինս, եւ առաջնոյն զդահեկանն միայն՝ և վերջնոցս եւ զայգին հանդերձ պտղովքն. որում արժանաւորք լիցուք որպէս ասաց, նոյնպէս և 'ի հանդերձեալն՝ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. ընդ որում Հօր և և Հոգւոյն սրբոյ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ընկալ զընծայսդ իմ զսակաւ՝ զոր Ձեզ նուիրեմ սրբոյ Հեթում. վասն էր ինդիրն քո քան զնս, և իմաստնոյ գործ նա այլում, զի գեղեցիկ գրէր քան զնս ըստ արժանեաց տեսոյ մտաց քում. լիր անարգամիտ առնս, և նմանեա՛ ասա Տեառն քում։

1525

1525

1525